

3476

Գ

Ր

Ա

Շ


Ի

Մ Ո Ւ Տ Կ












6028

ф н з г



20/58

A I 7966



У П Н С Ф



~~Ստեփան Բաղդատի~~

Տեխ. խմբագիր Ա. ԱՐԽԱՆ

9 2 4 0 0

---

ՅԵՐԳ ԳՐՎԱԾ ԳԻՇԵՐԸ, ՅԵՐԲ  
ՊՈՆՏԸ ԿԱՐԳՈՒՄ ԵՐ  
ՅԵՐԳԵՐԻ ԳԻՐԲԸ

Հարյուր մոմանոց ս', փոքրիկ լամպ իմ,  
Կախված ես գրասեղանիս վրա,  
Դուրսը անձրեկ ե, մթություն, ամպ ե,  
Սենյակս լիքն ե լույսով քո շաշվ:

Սենյակս լիքն ե, լիքն ե քո լույսով,  
Իմ շողշողուն լամպ, լուսեղին բուռնցք,  
Ահա յես քո դեմ խաղաղ մի հույզով,  
Զգացմունքներիս քարտեզն եմ փուռմ:

Յես ուզում եմ անխ, ուզում եմ խաղաղ  
Իմ հայրենիքի յերկնքի ներքո,  
Քեզ նման վառվել, շողալ ախ, շողալ,—  
Սրախս կրակը թափել իմ յերգով:

Յեկ այնպես, ինչպես մոմերից լույսե,  
Դու շաղ ես տալիս լույսերդ շողուն,—  
Յես ուզում եմ անխ, հույզերս հոսեն,  
Իմ պարզ յերգերի ամեն մի տողով:

Յեւ զանկանում եմ չծածկել վոչինչ,  
Իմ ընկերներէց գաղտնիքի քողով,  
Բաց հայտարարել իմ սիրտը վճիա,  
Վորպէս դճնարաց ընդհանուր ժողով:

Արտահայտվեն թո՛ղ բոլոր հույզերս,  
Յեւ խնդությունս, յեւ ախուրությունս,  
Յեւ այն աղջկա անհույս սերը,  
Վոր որակաւրդից արդեն հանել եմ:


Թո՛ղ կարկաչի իմ յերգերովը,  
Կենսագորությունն իմ սեփական,  
Յեւ յես եմ, լոկ յես յերգիս հերոսը,  
Յեւ ներաշխարհը իմ անփականք:


Իսկ դու մտերիմ, քո՛ւյրն ես մտերիմ  
Իմ գիշերային աշխատանքի,  
Ու ցոլքն ես դնում քո լույսերի,  
Իմ յուրաքանչյուր բառին ու հանգին:


Բայց չես զգա դո՛ւ, ինչ ե յերազվում,  
Ուղեղիս կապո՛ւյտ, կապույտ, լայներին,  
Յերբ կարդում եմ յես ահա Հայնեյի,  
«Յերգերի վիրքը» հնչուն ու լազուր:

Շողան, պայծան իմ, շողան, շողան,  
Թող սիրտս կարդա, գիրքն այս քո լույսով,  
Ասե՛նք կարող ես յե՛վ չչողալ—  
Ձգվել ե այգը քաղաքի ուսով:

5







\* \* \*

Եւ չեմ քաշի հյուսերդ,  
Ցավից եւ չես ճշտ,  
Ինչ վոր ունեմ՝ լուսերիդ,  
Սեր իմ, կապույտ լճակ . . .

ՅԵՐԳ ԳՐՎԱԾ ՍԻՐԵՆԻ ՏԵՐԵՎԻ  
ՎՐԱ

(Նմանութուն Ալազանի)

Յես սիրեցի մի թուխ աղջիկ,  
Իսկ աղջիկը ինձ չսիրեց,  
Բայց դրանից հո չի հալչի,  
Սրտիս սերը, ծաղկուն սիրեն...

## Տ Ի Ռ Լ Ե Տ Ն Ե Ր Ե Լ Ի Զ Ի Ն

Կարոտում եմ քեզ հաճախ,  
Ու քաղաքը ձեր, Ելիզ,  
Սրտիս ամեն մի թելով  
Կարոտում եմ քեզ հաճախ:  
Աչքերը քո ջինջ լճակ,  
Յես սիրում եմ դեռ ելի -  
Կարոտում եմ քեզ հաճախ.  
Ու քաղաքը ձեր, Ելիզ:

\* \* \*

Ձեր քաղաքի բուլվարը  
Միշտ կանաչ է իմ սրտում,  
Աչքերի պես քո ժպտուն,  
Ձեր քաղաքի բուլվարը:  
Ծաղիկները միշտ վառ են,  
Ծառուղիները միշտ խնդուն,—  
Ձեր քաղաքի բուլվարը,  
Միշտ կանաչ է իմ սրտում...

\* \* \*

Մուսցեղ եմ շատերին,  
Բայց ախ, քեզ չեմ մոռանում.

Թեյեվ վորպես մի անուրջ,  
Մոռացել եմ շատերին:  
Դու ծաղկուն փշատենի,  
Սրտիս բույրն ես քո ցանում, —  
Մոռացել եմ շատերին,  
Բայց անի, քեզ չեմ մոռանում. . .

\* \* \*

Քո հայացքը, ելիզ,  
Պոետը չի մոռանա,  
Մշտածիծաղ ու անամպ,  
Քո հայացքը, ելիզ:  
Կհիշե նա դեռ ելի,  
Թեկուղ ինչքան ել հեռանա, —  
Քո հայացքը, ելիզ,  
Պոետը չի մոռանա:

\* \* \*

Դու մերթ նրան կթվաս  
Քաղցրահնչուն մի գազել,  
Մերթ տրիտլետ մի լուսե,  
Դու պոետին կթվաս:  
Յեվ նա տխուր կամ զվարթ  
Հնչուն յերգեր կհյուսե,  
Մերթ պոետին կթվաս,  
Դու յերգեցիկ մի գազել:

\* \* \*

Սիրահար ե պոետը,  
Լավ աղջկա, լավ յերգի,  
Լավ աղջկա լավ գրքի,  
Սիրահար ե պոետը,  
Սերը՝ ամուսն ջինջ գետ ե,  
(Թող ջուր առնե ամեն կին) —  
Սիրահար ե պոետը,  
Լավ աղջկա, լավ յերգի...

\* \* \*

Ասում են ինձ, թե հիմա  
Ուրիշին ես դու սիրում,  
Ուրիշին ես համբուրում,  
Ասում են ինձ դու հիմա:  
Ել ինչու յիմ յես հիմար  
Քեզ տրիտետներ նվիրում —  
Յերբ ասում են, թե հիմա,  
Ուրիշին ես դու սիրում:

## Յ Ե Ս Ս Ի Բ Ե Յ Ի Ա. Գ. Զ Ի Կ Ս

Սիրեցի յես աղջիկս  
Սիրով առաջին,  
Սէքերիդ լուրթ յերկինքը,  
Խոսքերը քո ջինջ:

Այնքան յերգեր յերգեցի  
Մեր սիրո մասին,  
Լսի քայլքդ յերգեցիկ  
Անզամ յերազիս:

Թվացիր կապույտ յերազ,  
Դու միջ թվացիր,  
Ու հեռավոր ու անհաս  
Ու աստղածին:

Հիմա ծաղկել ես բաղչի  
Բալենու նման,  
Իմ խշշուճ սեր, իմ աղջիկ,  
Յերկրային հմայք:

Հասունացել եմ յես ել,  
Քաշել եմ հասակ,  
Յերգերի մի նոր յեզերք,  
Քո սիրով հասա:

Ել յերազ չես, կամ ցնորք  
Ինձ համար անուշ,  
Սովորում ես դու կինո  
Համալսարանում:

Ու թոշակ ես ստանում  
Հարյուր ու քանի...  
Գիտես ուր ե մեզ տանում,  
Մեր գիծը կարմիր:

Դրանից ել կդառնաս  
Դու լավ սցենարիստ,  
Ու կհանես մեր վառման  
Սերը եկրանին:

Սիրեցի յես ազջիկս  
Սիրով առաջին,  
Աչքերիդ նուրբ յերկինքը,  
Խոսքերը քո ջինջ:

\* \* \*

Մութն ե իջել կապույտ, անթափանց դիշեր ե  
Ու անձրեփն ե խշռում քաղաքում,  
Յես նստած քրքրում եմ իմ տխուր հուշերը,  
Ու թախիծն ե դեղին ինձ ողակում:

Յես տեսնում եմ նորից Յւրեվանը գարնան  
Ու աչքերիդ կապույտը Լուսիկ,  
Ու որերս անցած, վոր նորից չեն դառնա,  
Ինչպես խշռուն Զանգուն յերբեք յես չի հոսի...

Ինչպես խշռուն Զանգուն յես ցրեցի իմ քնչը,  
Զահելության ջրերը, արծաթաձայն, խոսուն,  
Այդ կորուստն ե հիմա իմ վորը սիրտը սգում,  
Այդ թախիծն ե հիմա իմ տողերով հոսում...

Ինչքան եմ յես, ինչքան, ախ ցրել յերգերս,—  
Հույզերիս ծաղիկները թողել անխնամ,  
Ինձ չի ների գիտեմ անդուլ իմ յերկիրը,  
Դասակարգն իմ համառ ու անխնա...

Ինձ չեն ների նրանք գլխարկներով կանաչ  
Սահմանապահ չիկիստ արթուն ընկերներս,


Խիղախուլթյամբ վորոնք մի անսահման, անափ,  
Փայփայում են, հսկում յերկրիս սահմանները:

Իսկ յես ծույլ եմ յեղել . . . Վորպես դեղին թերթեր  
Կյանքս շաղ եմ տվել անխմաստ ու շռայլ,  
Ձեմ հույսել գործին մեր, յես ինձանից մի թել,  
Մի լավ յերգ ել չունեմ գրած . . .

Դրանից ե թախծով եմ, մորմոքով եմ վառման,  
Յերգում քո աչքերի կապույտը, Լուսիկ,  
Ու որերս կորցրած, վոր նորի չեն դառնա,  
Ինչպես խշշուն Ձանգուն յերբեք յետ չի հոսի . . .

85107

A 7966



## Ա. Ղ. ՋԻԿՆԵՐԸ

Յերդեկ են ամեն ութմով, հանգով,  
Գրիչներ լուսե, պոետներ քանի,  
Աչքերդ կապույտ, մաղերդ գանգուր,  
Վարպույրն անգամ քս պատուհանի:

Հրնշք աղջիկ ես, չեղած թաղուհի,  
Անմեղ հրեշտակ ես, դու կույս ես հրաշք,  
Բիաթրիչե, յերկնային յերազ,  
Նստած դրախտի վոսկեղոծ գահին:

Բիաթրիչե, Բիաթրիչե,  
Յերկնքից յերկիր, յերբեք չես իջել,  
Դու մստղ ես, մմսղ ես, արև ես դու ջերմ,  
Իմ ամսղ, իմ աստղ, քեզ ինչպես կոչեմ:

Լուսե աղջիկ ես, վոսկե թիթեռ ես,  
Կապույտ յեթեր ես, իմ անդին թերեզ,  
Սիրաս թերթեղ ես, թափել թերթերս,  
Ա՛խ իմ վարդերս, վոսկե վարդերս . . .

Աչքերիդ ծովում խորունկ անհատակ,  
Սիրո մակույկն իմ փշրվեց եմմն,

Լույսերս, սերս, հույսերս հատան,  
Շատացավ միայն դարգերիս թեման:

Շարլոտան, քաղցր, անուշ Շարլոտան,  
Անիմանալի իմ կապույտ թախիժ,  
Փշրեցիր սիրտս, վորպես մի դիտար  
Ել չի, չի ժպտա ինձ վոչ մի ծագիկ:

Գանտեից—Գյոթե, ու Հայնե, ու Պո  
Մինչև մեր վահան Տերյանը, մինչև—  
Նույն յերգն են յերգել տարբեր հանգով,  
Նույն սերն են կիսել իրար միջիկ:

Տարբեր հանգերով հսպես յերգել են,  
Բանաստեղծները հին մոլորակի,  
Վիրքեր են յեղել նրանց յերգերը  
Ու կապույտ մոխիր հանգած կրակի:

Սիրելի Լուսիկ, (նշենք իր տեղում),  
Դու ամպ չես, ասող ու վոչ ել թիթեռ,  
Բանում ես ինձ հետ միևնույն ցիխում,  
Շարում ես զրքեր, ժուրնալներ, թերթեր:

Ու յերբ կապում ես ժամանակից շուտ, —  
Թերթի հերթական համարը, —  
Ուրախությունից սիրտդ ե խշշում,  
Ինչպես քամու դեմ սաղարթոտ ծառը:

Գու հրեշտակ չես, վոչ ել թապուհի,  
(հայացքդ ծով չես, խաղաղ ու խաղող),  
Հեռակայում ես հեռակա Բուհ-ին  
Ու ինձանից ել լավ շախմատ ես խաղում:

Յես ինչպես ասեմ, քեզ դեղին լուսին,  
Կամ դարձանային ամպի քուլա,  
Յերբ բացել ես դու սիրելի Լուսիկ  
Թեքումների դեմ անխափան կրակ:

Յերբ քո աչքերը շողշողում են,  
Ու կանչում են ինձ մրցականչի,  
Յեվ յես սիրում եմ նրանց շողումը,  
Աշխատանքային սերը անջինջ:

Մտերմութունն եմ յես սիրում նրանց,  
Մտերմութունը անկեղծ ու անդին,  
Վոր թանգ ե, թանգ ե ամեն սիրուց,  
Ամեն մի կյանքից հղիացած, հանդիստ:

Վճչ դու ամպ չես, ասուղ, վոչ ել թապուհի,  
(հայացքդ ծով չես, խաղաղ ու խաղող),  
Հեռակայում ես հեռակա Բուհ-ին,  
Ու ինձանից ել լավ շախմատ ես խաղում:

Ն Ա Մ Ա Կ

Յերազուժ հմ դեռ, քեզ սիրելի,  
Սեվաշյա իմ սեր, իմ անդին Անիկ,  
Հայացքդ գծվում ե դեռ ելի,  
Իմ սրտի կապույտ պատուհանին . . .

Ու խոսքերը քո դեռ հիշում եմ,  
«Կգտնեմ յես քեզ ուր ել գնաս»  
Ու սիրտս նորից խշխշում ե  
Ու յես վերցնում եմ սհա քնար:

Ա՛խ, մեր բաժանման տխուր որից  
Ինչքան որեր են կարկաչել, հոսել,  
Ինչքան գույներ են իրար հյուսվել,—  
Բայց յես հիշում եմ քեզ նորից, նորից:

Մայիսի մեկն եր: (Ս. յնքան հիշելու  
Հուշեր, հուշեր կան անմոռաց, անջինջ),  
Հանձնարարված եր մեզ մի գիշերում  
Լույս ընծայելու թերթը բջիջի:

Նյութեր չունեյինք: Բոլոր տեղերքը  
Գնացել էին շրջկենտրոն ժողով,

Բայց ինչ ել լիներ առավոտ ծեղին  
Պատից կախ պիտի լիներ „Շողը“:

Մենք գյուղխորհրդի ճրագի անջինջ  
Լույսի տակ եզ գիշեր լուսացրինք,  
Յեւ յերգերովը իմ առաջին,  
Մեր թերթի ճերմակ սյունները լցրինք:

Հետո գծեցինք ճակատը թերթի—  
Մեր կանաչ, կանաչ լեռների գոշի,  
Արշալույսի վառ կարմիր գոտին,  
Վոր նման էր այնքան մեր զրոշին:

Դու հավանեցիր իմ այդ յերգերը  
(հոնարարի տեղ տվիր մի համբույր),  
Ու պոեա դարձա յես այդ գիշերը,  
Թեյեով մեր գյուղի նեղ մասշտաբով:

Իսկ առավոտը բջիջը արդեն  
Յերգերս յերգեց մայիսյան ցույցին,  
Իմ մեջ բացվեցին յերգերի վարդեր  
Ու սերդ ծաղկեց վորպես ակացին:

Հետո մի ուր ել յես անցա քաղաք  
(շրջկոսը ասաց. «զնն, սովորիր»),  
Սրտիս հատակում քո սերը թաղած,  
Շրթերիս վրա շրթերիդ մորին:

Բողոքն այս Անիկ, անցել են վաղուց,  
Ինչպես ժայռիցը գլորվող ջրվեժ,

Իմ ջինջ որերի կանաչ շղթայում  
Քո սիրով միայն սիրաս ջրվեց:

Գիտեմ դու հիմա սիրում ես պարզ ե՛  
Ձեր քարտուղարին, իմ բարեկամին,  
Նրան ես գիտեմ դու հիմա պարզել  
Քո սիրո քնքուշ, գգվող քամին:

Յե՛վ արդեն, արդեն մի ջինջ մանկիկ  
Թովոում ե քո թե՛վերի վրա,  
Բայց նորից, նորից իմ սեր, իմ անգին  
Սիրում եմ յես քեզ սիրով հուրհրան:

Յե՛վ ասում եմ քեզ, թե իմ ընկերս,  
Մի որ թողեց քեզ, չուզեց հլ սիրել—  
Նստիր դու գնացք ու արի մոտս,  
Յես քեզ նույն սիրով նորից կսիրեմ:

Կշոյեմ նորից պայծառ քնքշանքով  
Մազերդ շողուն, իսխ, սերդ հանկարծ.  
Առայժմ բարե՛վ քեզ, ամուսնուն քո,  
Ու քո թովոուն, քո լուսե մանկան:

# Ա՛խ, ՅԵՍ ՔԵՉ ԵՄ ԳԵՌ ՀԻՇՈՒՄ

Ա՛խ, յես քեզ եմ դես հիշում,  
Իմ անուշիկ, իմ աղջիկ,  
Յե՛վ սիրտս և մշուշվում,  
Հույզերս են խշխշում,  
Ծառերի պես ձեր բախշի:

Ա՛խ, ձեր բախշի ծառերը,  
Մրդով լիքը ծառերը,  
Պահ են դալիս իմ սրտում,  
Յե՛վ յես անքուն գիշերիս,  
Քո աչքերը հիշելիս,  
Դառնանում եմ ու արամում:

Քո մազերի փնջերը,  
Թուխ մազերիդ փնջերը,  
Ա՛խ ինչքան եմ գուրգուրել,  
Սե՛վ աչքերիդ լճերը,  
Աչքերիդ սև լճերը,  
Ինչքան, ինչքան համբուրել:

Ա՛խ քեզ վրոնց մոռանամ,  
Ա՛խ, յես քեզ վրոնց մոռանամ,  
Իմ անկուռ սեր, իմ աղջիկ,  
Սիրտս ձյուն չի սարերի,  
Գարնան ձյուն չի սարերի,  
Վոր արեվից շուտ հալչի...

Կ Ա Ր Ո Տ

Մի թխաչյա աղջկա  
 Յես թողել եմ Յերեվան,  
 Մաղերը թուխ ու գանգուր  
 Ու ծիծաղը կարկաչուն,  
 Վորպես փրփրուն Ջանգուն...  
 Արդեն ճնահալն ել ընկավ,  
 Վոչ մի նամակ չերեվաց,  
 Մի թխաչյա աղջիկա,  
 Յես թողել եմ Յերեվան...

Մի վառ կարոտ եմ թողել,  
 Գարնանային մի անուն,  
 Խաղողի ու մրգերի,  
 Այն խշխշուն քաղաքում,  
 Նոր շենքերն են ուր հիմա,  
 Հին թաղերը ողակում,  
 Շենքերի պես այն լուսե,  
 Մրգերի պես այն անուշ,  
 Մի վառ կարոտ եմ թողել,  
 Գարնանային մի անուն...

Այս ձնհալին, յերբ սիրտս,  
Խըշտում ե սիրո շառաչից...  
Գանգուր գլուխը հակած,  
«Կապիտալ»-ի եջերին,  
Իմաստությունն ե խլում նա,  
Նրա խորունկ առդերից,  
Վեր քննությունը գծվարին,  
Վազը պատվով նվաճի,  
Այս ձնհալին յերբ սիրտս,  
Խըշտում ե սիրո շառաչից...

Կամ շրջանի սովխողը  
Պրակտիկա յե գնացել,  
Կամ գործուղել ե ՅԵԿԱՆ,  
Այնքան գործեր բազմազան,  
Այնքան գործեր հարազատ,  
Եզ տաք գործերի փոշում  
Իմ սերն ել ե մոռացել,  
Նա յերեվի սովխողը,  
Պրակտիկա յե գնացել...


Մի թխահեր աղջկա,  
Յես թողել եմ Յերեվան,  
Ջինջ աչքերը՝ գույգ լճակ,  
Ու ծիծաղը Ջանգվի  
Ջրերի պես կշկշան...

Արդեն ձնհալն ել ընկավ,  
Վոչ մի բացիկ չերեկաց,  
Մի թխաներ աղջկա  
Յես թողել եմ Յերեվան...



6

**II.**



Յ Ե Ր Գ Գ Ա Ր Ն Ա Ն Մ Ա Ս Ի Ն  
Գ Ր Վ Ա Մ Չ Մ Ե Ռ Ը

Գարձն իմ, գարձն անձրեվառատ,  
Անձրեվարեր քսւյր,  
Ջրերով հախուռն ու վարարած,  
Դու հյսւր դաշտերի, արտերի բերքուն:

Քաղբաժնի պետի, տրակտորիստի,  
Գարձն, դու կանանչ, կանանչ բարեկամ,  
Դու տաք որակարգ կոլխոզի նիստի,  
Պոետի համար, դու ջերմ լիբիկա:

Յես հարգում եմ քու այս ընթացիկ,  
Տարվա խշխշուն կապույտ անձրեվին,  
Հետո կայծկլտուն, շռայլ արեվիդ,  
Ոգնեցին նրանք ցանքսի ընթացքին:

Հողը հերկեցինք ժամանակից շուտ,  
Ու աստղերի պես մաքուր, շողշողուն,  
Մեր գտած սերմը քաղցր մի հուշով,  
Քաղեցինք բերրի մեր սեվահողում:

Ահա հանել են հողից մեր ցանած,  
Գլուխներն իրենց ծիլերն առաջին,

Խմում են նրանք շրթերով կանանչ,  
Շողերն, արեվի յեվ պայծառ յեվ ջինջ:

Նայիր թխահեր, մեր ազրոնումին,  
Շրջում ե ահա արտի յեղերքով,  
Հիացած նրա ծլարձակումից,  
Բեխի տակ ուրախ մի յերգ և յերգում:

Գարձն իմ, գարուն անձրեվառատ,  
Անձրեվաբեր քույր,  
Ջրերով հախուռն, ու վարարած,  
Դու հյուր դաշտերի, արտերի բերքուն:

ԻՄ ԱՄՊ, ԻՄ ՋԻՆՋ ԱՆՁՐԵՎ.

Իմ ամպ, իմ ջինջ անձրեւի,  
Մազվեցիք իմ հոգում,  
Իմ հույզերին անձեւի  
Դուք յեղաք քույր...

Յես սիրեցի մի որ ձեզ  
Սիրով իմ վառման,  
Կուզեյի յես եւ ձեզ պես  
Ամպ, անձրեւի դառնալ...

ՊԱՐՆԱՆԱՅԻՆ ԽԱՊՈՐՏ ՎԵԿԱՎԱՐԻՆ

Շափշափում ե ու խշշում գարնանային անձրեվը,  
 Զինջ բարեբեր անձրեվը մեր բարեբեր դաշտերում,  
 Աստղերի պես շողշողուն համայնական սերմերը  
 Շաղ ենք տալիս մեր փխրուն համայնական ցեղերով:

Շաղ ենք տալիս հույսերի անմարելի շողերով  
 Սերմերը մեր վոսկեղույն, սերմերը մեր շողշողուն,  
 Անձրեվի տակ բարեբեր, արգասաբեր հողերում,  
 Կանաչ ծիլեր կարձակեն նրանք շաղով ու շողով:

Կանաչ ծիլեր կարձակեն, ինչպես մաքերն իմաստուն,  
 Մեր սրտերում, յերգերում, յերկրում մեր լայնանիստ  
 Հետս վոսկե հասկերով կխշխշան արտերում,  
 Հովիտներում կյերգի բերքի, լիության քամին...

Ու յերբ յերգի աշունը, եի վոսկերերք աշունը,  
 Համայնական արտերից համայնական ցնձությամբ —  
 Բերքի գեաը կհոսի, մեր կալերը, մեր տունը, —  
 Ել չի նստի մեր գեմքին քաղցի, սովի վոչ մի ամպ:

Շափշափում ե ու խշշում գարնանային անձրեվը,  
 Զինջ բարեբեր անձրեվը արգասաբեր դաշտերում,  
 Մաքերից պես շողշողուն համայնական սերմերը,  
 Շնղ ենք տալիս մեր փխրուն համայնական ցեղերով:

Լ Ի Բ Ի Կ Ա Կ Ա Ն

Ապրիլ իմ, կանաչ ապրիլ,  
Պարզիք ինձ կանաչ ձեռքդ,  
Քո շնչով եմ ուզում ապրել  
Յերկրիս վերելքը:

Իմ հոգու կառուցվածքով,  
Դու պիտես, յես լիրիկ պոետ եմ,  
Սիրում եմ աստղերը քո,  
Ու անտառ, դաշտը, գետը:

Ինչ ճիշտ ե, ճիշտ ե,  
Յեղել եմ յերգերի դեզերաիր,  
Իհարկ ե այդ վիշտն ել,  
Քանդել ե իմ սիրտը իր հերթին:

Յես հիմա վերցրած գրիչս,  
Քեզ եմ յերգել ուղում,  
Յերկնքիդ մաքուր լիճք,  
Անձրիվդ խշշուն ու լազուր:

Քո սպերատիվ ողնությամբ  
Ծլել են հոլխոզի արաները,  
Անգամ փոքրիկ մի ամպ,  
Կատարել ե այս հարցում իր դերը՝

Գնում ե մեր բրիզազը նայիր,  
Կարելու վորթը խաղողի  
Իր ուժը նա չի խնայի,  
Պայքարում հողի՝

Կմաշկի այգին, կխնամի  
(Բրիզազում ե անգամ իմ նանը),  
Աշնանը Արութ խնամին  
Կկատարի,  
Խաղողի կոնարու պլանը՝

Արեվդ մանավանդ, արեվդ,  
Ցանքսի ավարաման նպաստեց,  
Կանաչ մայկաններ են հազել ծառերը  
Այս փաստ ե՝

Յերգում են սարյակները սեվ,  
Պոռտներից հաջող ավելի,  
Քաղցր են նրանց լսել  
Շողերի տակ քո ջինջ արեվի՝

Ծաղիկել են ծառերը խնձորի,—  
Հազել են վարդագույն շորեր.

Կլկլոււմ ե գետակը ձորի,—  
Լիրիկ ու քնքշորեն:

Լողում են կապույտ յերկնքով  
Դիրիժաբլները ամպերի.  
Ապրիլ իմ, ամառ իմ ու քնքշ.  
Յերկիր իմ, յերգ իմ սիրելի:

ՅԵՐԵԳ ՅԵՐԳ ԱՇՆԱՆ

I.

Սպասում եմ քեզ, ինչպես հարսն և  
Իր սիրած աղին միշտ սպասում,  
Կարտախ յուրաքանչյուր հասկը  
Վտակե անունն և քս փոխում:

Ե՛խ, դու դալու յես, դիտեմ՝ դալու—  
Յե՛վ բերելու յես ինձ խնդություն,  
Ամառ իմ, յերգի, բերքի գարուն,—  
Յերկրիս վտակե իմաստություն:

Յորենի շեղձեր վտակեղեղին,  
Ու սայլաշարքեր հասուն մրգի,  
Ամառ, ինձ համար դու յերգ յեղիք,  
Յնծություն յեղիք հնչուն հանգի...

Սպասում եմ քեզ, ինչպես հարսն և  
Իր սիրած աղին միշտ սպասում,  
Յե՛վ դուրգություն և նա իր վարսը,  
Յե՛վ իր սիրած ին միշտ յերագում...

Աշուն, վոսկե իմ աշուն,  
 Վոսկե շորով աղջիկ,  
 Դու յիս իմ շուրջը շրշում  
 Բաղերից ու բախչից:

Ինձ ևս պարզել քո վոսկե  
 Մրդերի վառ սինին,  
 Յե՛վ թարմ, վոսկեբառ խոսքեր,  
 Յե՛վ փրփրուն դինի:

Տարածվի՛ թող, իմ յերգով  
 Մրդերի՛գ բարկ բույրը,  
 Վորպես ջահել հատակի  
 Առաջին համբույրը:

Նրա նման գեղեցիկ,  
 Նրա պես թարմաշունչ,  
 Յերգվի՛ր, յերգով յերգեցիկ  
 Աշուն, վոսկե աշուն. . .

III

Անուշ մըգերով յեկար, աշուն,  
Անհուն բերքերով յեկար, աշուն,  
Արեւային յերգերով,  
Մաքերով, վառ կրքերով,  
Վտակե գրքերով յեկար, աշուն:

## Մ Ո Վ Ի Յ Ե Ր Գ Ը

Ճեղքում են նավերը անծայրածիր մովը  
Կասպիական անզուսպ ալիքների.  
Ու պարում ե հովը ու յերգում ե ծովը,  
Արնափրփուր յերգը այն որերի:

—Վտոք են կոխել մի որ իմ ափերը կարմիր,  
Անգլիական դաժան մուլթները,  
Ու կոմունի արյունը առուններով քամել, —  
Ավազներում խեղդել մարտիկներին:

Ու տանկեր են կապել Բագվի վրա,  
Հոտոտել են նրա սեւ խորշերը ըստր,  
Ու քամել են նավթը, արյունը հուրհրան,  
Դուլարների սիրտը սրսկելու:

Հիմա, առույգ տղա, դու կառուցիր, դգան,  
Մերոնց արնով ըացված այս գարունը անծիր,  
Դասակարգիչ կովում ուղղիկ յեղիր զգասա  
Յեւ այդ կովում նոր ուժ, գիտակցություն դանձիր:

Փորիր, փորիր, փորիր նավթահորեր նոր-նոր,  
Նավթի շատրվանը թող գետերով հորդի,

Ի՞մ ամերից անդին նա նորից և վառնում,  
Նորից և ցանկանում պատմութեանը փորձել:

Նավթով պիտի հիմի խեղդենք նրան,  
Այն «նավթային արքա» Դեանբորգին,  
Վոր զրոհեց—կանգնեց կոհակների վրա,  
Թնդանոթներ տանկեր ու գալլարներ ձեռքին:

Թող թռչկոտեն նավթի ցիստերնները արագ,  
Ու սելսերը կծկեն յերկաթեղեն վազքով,  
Վոր մեր ուժը հուժկու հեռուներում յետա,  
Ու խավարը ցնդե արեվներով, վոսկով . . .

Ձափողները զնդուն, շախտաները անթիվ,  
Թող հոնդան, շաչեն կարկաչներով վարար,  
Վոր խշխշա հողը մեր վիթխարի խանդից,  
Ու վոչ մի հասկ ջրին չմնա ծարավ . . .

Թող շողշողան, յերգեն աղյուսները վարդե,  
Մահվան գնով յեղնող այս պատերի վրա,  
Ու թող սիրտդ, սիրտդ քնար դառնա, հորդե,  
Ու յերգելով զրկի նվագները նրանց:

Թող յերկիրը հառնի հին սրերի մուժից,  
Մի յերկաթե կեպի գլխին թեքած,  
Վերջին քարն ել շնչի թող կառուցման փոշին,  
Ու բարձրանա տեմպով բոլշեփիկյան:

Դեռ յերգում ե ծովը ու սեղմում ե սիրտս,  
Լ'նզվզումի, ցասման մի վիթխարի ալիք,  
— Տնւր ինձ, տնւր ինձ ծով իմ ալիքներիդ  
թիւնդ,  
Անհղածայն ու վառ մրրիկներում դալիք:

Թող վաթարկոտ լինեմ պայքարահույզ հրով,  
Հին աշխարհի դեմ այն մահամեա,  
Հրեղեն նեա լինեմ, լինեմ լուսե դրոշ,  
Արնոտ մահը դրկած հերոսների նման:

Հ Ո Ւ Շ Ա Ր Ձ Ա Ն

Ձեր արնով ներկված այս ափին,  
Ծաղկում ե, ընկերներ, ձեր շիրիմը,  
Յերգում են սերունդները ձեզ հիմն  
Ձեր արնով ներկված այս ափին:  
Անցել են որերը սարսափի,  
Ծխի պես ցնդում ե հինը,  
Ձեր արնով ներկված այս ափին,  
Ծաղկում ե, ընկերներ, ձեր շիրիմը:

Ձեր տնկած յերեկվա տունկերը,  
Անտառի պես յելան, բարձրացան,  
Խշշում են խոր ու բարձրածայն,  
Ձեր տնկած յերեկվա տունկերը:  
Վառել են կամքը ձեր սերունդները,  
Վորպես վառ, անմար լուսարձակ,  
Ձեր տնկած յերեկվա տունկերը,  
Անտառի պես յելան, բարձրացան:

Թող լինի ձեզ պայծառ հուշարձան,  
Կառուցման մեր ամեն մի քարը,  
Այս ափում տնկած մեն մի ծառը,  
Թող լինի ձեզ կանաչ հուշարձան:

Անդուլ և մեր մարտը դարձյալ,  
Այդ մարտում ձեր կամքը հզոր և,  
Թող լինի ձեզ պայռած հուշարձան  
Մեր ամեն մի փորած նավթահորը:

Ու յերբ հնչի հատուցման ժամը,  
Ձեր մահով մեր սիրտը թող վառվի,  
Հանի մեզ համառ պայքարի,  
Յերբ հնչի հատուցման ժամը:  
Աններող լինենք, դաժան մենք,  
Աններող ձեզ պես ու արի,  
Յերբ հնչի հատուցման ժամը  
Ձեր մահով մեր կամքը թող վառվի:

Վ Ի Շ Կ Ա Ն Ե Ր Ի Ք Ա Գ Ա Ք Ո Ւ Մ

Խնդություն իմ նորորյա—վիշկանների քաղաքում,  
Սուլիչների սիմֆոնիա—վիշկանների քաղաքում:

Բարձրանում են շենքերը յերկաթեղեն վտաքերով,  
Բյուր կառուցող ձեռքերը—վիշկանների քաղաքում:

Տրամվայներն ու սթոն, ժապավեններ մայթերի,  
Ելեկտրավառ լույսի տոն—վիշկանների քաղաքում:

Ակոսում են նավերը կապոտագեղ ծոցը ծովի,  
Ծո՛վ իմ, կյանքի պես թովիչ—վիշկանների քաղաքում:

Յեվ նավթարյունն և յեռում կասպիական օվերով,  
Ու տարածվում և հեռու—վիշկանների քաղաքում:

Դեմքեր բրոնզե ու յերկաթ և բազուկներ մկանուտ,  
Ինչքան չերզված յերզեր կան—վիշկանների քաղաքում:

Յեվ վորպես յերգ մի մարող՝ որերի դեմն այս  
հուժկու—

Մինարեթներ խարխլած—վիշկանների քաղաքում:

Խնդություն իմ նորորյա—վիշկանների քաղաքում,  
Սուլիչների սիմֆոնիա—վիշկանների քաղաքում:

ՎՈՂՋՈՒՅՆ ՔԵՉ, ՔԱՂԱՔ ԻՄ ՍԻՐԵԼԻ

Վողջույն քեզ, վողջույն քեզ, քաղաք իմ սիրելի,  
Քո սլացող գնացքի փոքրիկ պատուհանից,  
Քեզ, կարոտներ ու սեր կանաչ Յերեվանից —  
Զավուդիբրից նրա նոր ու մրգալից բաղերից:

Վողջույն, վողջույն 26-ի

Հայրենի որրան,

Վորոնց նավը մի որ ջրերում այս որորաց,

Վորոնց արյամբ սակայն մենք մեր դրոշը ներկեցինք:

Վողջույն, նավթի աշխարհ, քաղաք իմ նավթային,

Վողջույն, կասպիական ջրեր որորուն,

Վողջույն, սայծառ արևի, արեվային մայիս,

Ծովեզրյա կանաչ բուլվարներում:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱԿՐԵՋԱՆԻՆ

Քո մայրութիւնն են խոր շնչում,  
Հիմա ափերը քո լիմոնի,  
Նվազուն ու ջինջ, վորպես սոնետ,  
Քո մայրութիւնն են խոր շնչում:

Վառողի բույր եր յերեկ շնչում,  
Արտդ հազել եր արնոտ շինել,  
Քո մայրութիւնն են խոր շնչում,  
Հիմա ափերը քո լիմոնի:

ԼԵՆԻՆՅԱՆ ՎԵՂ ԳԻՐՈՇԻ ՆՆՐԳՈՒ

Լենինյան վեհ դրոշի ներքո՝  
Մեր զնդերը կռվի յելան,  
Կործանեցին ուժը նրանց  
Լենինյան վեհ դրոշի ներքո:

Գնդակների ուրախ յերգով,  
Գծեցին մեր այս նոր երան,  
Լենինյան վեհ դրոշի ներքո  
Մեր բանակը կռվի յելավ:

Յ Ե Ր Ե Վ Ա Ն Ի Ն Մ Ա Ն . . .

Յև սիրեցի քո Ձանգուն,  
Ինչպես Պուշկինը Նեվան,  
Քաղնք, քաղնք իմ գնդուն,  
Յերեվան իմ, Յերեվան . . .

Յերեվանի նման ուրիշ քաղաք չկա,  
Ուրիշ, ուրիշ, ուրիշ քաղնք սքանչելի,  
Յերկինքը Ղինջ է, հասանի աչքերի պես աղջկա,  
Ջուրը հնչում, վորպես լարը վիպոնչելի . . .  
Յերեվանի նման չկա ուրիշ քաղաք . . .  
Ողբ լուրթ է, կապույտ ինչպես կապույտ խաղող,  
Հովը շոյող վորպես ծովը ամառային,  
Յև սիրեցի մի, քո քնքշությունը խաղանդ,  
Յերեվանի գարուն, իմ ծաղկավոր մայիս . . .  
Բարդիներդ բարակ, սլացիկ ու խշշուն,  
Կատարները ճոճվող կայմեր կանաչ,  
Գլվում են ինձ, փայլում հուշերում իմ խշշում  
Քնքշությամբ ու սիրով յերխասասարդ կանանց . . .  
Բաղերում ծիրանի, խնձորի ծառերը  
Հապել են մայիսյան Ղինջ վարդապուշն շորեր,  
Յերեվանի արև, սպիտակ արևի իմ,  
Ի՞նչ քնքշանքով յես քեզ, իմ սողերում շոյեմ,  
Ի՞նչ գույներով հիմա քո շողերը լուսեի  
Իմ յերգերին հյուսեմ . . .

Բայց ձեր սիրուց ավելի, Յերեվանի մայիս  
 Յերեվանի բարդիներ, օրն Յերեվանի,  
 Միրում եմ տուֆաշեն հարկերն այս հմայիչ,  
 Փողոցները այս նոր, լայն ու լայնաննիստ...  
 Կառուցման տենդը այս, վոր ահա հանել ե,  
 Կառուցող մի սերունդ այս պատերին,  
 Աստղերի պես բրոնզե լույսերն այս ցանել ե  
 Մայթերին այս վողորկ, ասֆալտե մայթերին...  
 Յեվ այս շենքը բարձր, շողուն ու վարդազույն  
 Սովորում ե ուր իմ դուրզուրած աղջիկը,—  
 Միշտ կցուլա սրտունն իմ, հույզերիս հատակում  
 Ինչպես ջինջ ու թովիչ նրա դեմքը...  
 Յեվ յես ուր ել դնամ, Յերեվանն իմ կանաչ,  
 Ինչ թախիծ ել սիրտը իմ մշուշե—  
 Պայծառ, պայծառ, հուշով յես կհիշեմ  
 Քո լույսերը լուսե, իր աչքերը անամպ...  
 Յեվ կհնչե միշտ ել իմ յերգում ու սրտում,  
 Աղջկական հնչուն իր արժաթ ծիծաղը,  
 Կոնգի ջինջ անձրեվը, Նորքի շողուն շաղը,  
 Բարդիների քաղնք, քաղնք իմ անտրտում...

## Յ Ե Ր Ա Ջ Ո Ւ Մ Ե Յ Ի Ն Ք . . .

Յերազում եյինք յերեկ ունենալ,  
Մի հիզրոկայան Ջանգլի խուլ ձորում,—  
Մեր կամքով ահա կառուցվել ե նա,  
Ու լույսն ե, լույսն ե լարերով ծորում:

Յերազում եյինք գորշ գավառական  
Մեր հին քաղաքում մի նոր տուն տեսնել,—  
Հիմա շողում են մեր դեմ տուֆաքար  
Խնդուն շենքերի կորսուսները սեզ:

Յերազում եյինք, խավար, մանեման,  
Քուչաների տեղ տեսնել մի փողոց,—  
Լայն փողոցներն են մեր դեմը հիմա,  
Նլեկտրական լույսերով վողող...

Յերազում եյինք... յեթերում, վերը,  
Կապույտ յերկնքի կամարը խլած,  
Ճախրում են ահա մանյովրի յելած,  
Կոմյերիտական ողանավերը:

ՅԵՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ ԳԻՇԵՐԸ...

Յես սիրում եմ գիշերը ցերեկից ել ավելի,  
Յերկիր իմ, ջինջ այսորդ յերեկից ել ավելի:

Աղմկում են հույզերս սրտիս կանաչ ձորերով,  
Հունաթող ու հորձանուտ, Թերեքից ել ավելի:

Խմում եմ յես շողշողուն շողերը քո արեվի,  
Սիրաս յերգով ե մխում, իմ յերգից ել ավելի:

Ու թախծում եմ, վոր դեռ չեմ յերդեկ քեզ լավ  
յերգերով,

Ու թախիժը այդ խորն ե, խոր վերքից ել ավելի:

Բայց յես դիտեմ, մի ջինջ որ կխշխշան տողերս,  
Իմ յերազած արտերի ծով բերքից ել ավելի:

Գոտակոյրվիր, հաւրհաւրս,  
 Հոկտեմբերեցան իմ արեւ,  
 Կամսոմուխսս իմ ուրախ —  
 Հոկտեմբերեցան իմ արեւ:

Միլլոնն յերկաթ զալտղնեւր,  
 Միլլոնն հանքեր շառաչող,  
 Խինդդ Իոնի պես վարար՝  
 Հոկտեմբերեցան իմ արեւ:

Հովերի պես խշխշան  
 Ու անհանդիստ ու անափ,  
 Արանք-արանք սրորուն՝  
 Հոկտեմբերեցա իմ արեւ:

Ու մանուշակ ջրերիդ  
 Հիզրոշենեւր զրնզան-  
 Հույսեր ու սեր իմ վառման —  
 Հոկտեմբերեցան իմ արեւ:

Վասիկ հասկով ու յերգով  
 Թող թեւերդ խշշան  
 Յերկիր իմ, շաղ ու շարմաղ՝  
 Հոկտեմբերեցան իմ արեւ:

Հորիզոնից հորիզոն  
Թող անուշիկ վառվի,  
Ու հմայքդ հուրհուրա  
Հոկտեմբերյան իմ արև:

Յե՛վ որե՛րն իմ մայիսյան  
Յե՛վ յեռանդն իմ անախ—  
Քո մայրության ու կտրնան  
Հոկտեմբերյան իմ արև:

## ՅԵՐԳ ԱՐԿՏԻԿՈՅԻ ՀԵՐՈՍՆԵՐԻՆ

Դրոշակի պես ձեր վառ անունը  
Մեր մոլորակի վրա ծածանվեց,  
Վոչ մի լեզենդար պայծառ անուն էլ,  
Աշխարհում այդպես դեռ չի ծածանվել...  
Շմիդտի ճամբար, ցնդվեցին անդարձ  
Լեզենդներն ամեն արշավիդ հանդեսը,  
Դու հերոսների կանաչ մի անասու,  
Խշուռն մի աշխարհ հանեցիր հանդես...  
Մառը հյուսիսում, սառույցի վրա,  
Ուր բուքն է խառնում ձյունի դեղերը,—  
Զարկեցիք կյանքի, մաքառման վրան,  
Մառցին դեմ դրիք կամքը ձեր, սերը...  
Մառցին դեմ դրիք կամքը, սերը ձեր,  
Բացեցիք յերկրի փերը անհայտ  
Ո՛ր, խորհրդային բեվեռայիներ,  
Ո՛ր, հետախույզներ հանդուհն, անահ...  
Միրով, հավատով ձեր խոր, անկաշառ,  
Ընդդեմ բեվեռի ահեղ տարերքի  
Ձեր մաքառումով, կովով վիթխարի—  
Ազդարեցիք դուք վողջ աշխարհին,

Վոր կա աշխարհում զվարթ մի աշխարհ,  
 Խրդախուժյան մի թեվավոր յերկիր:  
 Վոր յերկրում մեր լայն ու լայնանիստ,  
 Տիրողն եր փռել ուր ճանկերը սև  
 Ու քամում եր մեր քրտինքը լուսե—  
 Կառուցում ենք մենք, կյանք մի յերջանիկ,  
 Անդասակարգ մի հայրենիք վսեմ. . .  
 Վոր ներկան վնո ե, դալիքն անհուն ե  
 Մեր մեծ Միության պրոլետարիատի.  
 Գրեցիք նրա անջիջ անունը  
 Յուրտ Արկտիկայի սառցե ճակատին...  
 Գրեցիք պայծառ անունները ձեր,  
 Արկտիկական սառ յերկնքի վրա,  
 Փառքով պսակեց դասակարգը ձեզ,  
 Ո՛ր, սավառնորդներ հանդունդն, անահ. . .  
 Մառը հյուսիսում, սառույցի վրա  
 Փողփողան թող ձեր տնկած դրոշը,  
 Կհանդիպենք դեռ, մենք նորից նրան,  
 Յերբ նորից, նորից հորդե մեր ուժը...  
 Դեպի հյուսիսը դեպի բեվեռը,  
 Դեպի հայրենիքը մեր սառցանիստ...  
 Փնուք ձեզ, հերոսներ, փնուք ձեր թեվերին,—  
 Նավթոտ ափերից Կասպիականի. . .

5/9 1934 թ.

Յ Ե Ր Գ Պ Ա Հ Ն Ե Լ Ո Ւ Թ Յ Ա Ն

ЗВЕНИ, ЗВЕНИ МОЛОДОСТЬ,

Няк. Асеев.

Հնչիր, հնչիր իմ յերկրի ջահելություն վարարուն  
 Համայնական արտերի բերքերի պես լիտոտա,  
 Այս հարազատ ու ազատ սրերում ու աշխարհում  
 Բառալյոններդ առած, սուրած առաջ ու առաջ...  
 Աշնան հասուն խաղողի նման՝ կապույտ փիբուզի  
 Այս յերկինքն անտանման, այս անկար կամարը,  
 Այս աստղերը, ջրերը, արեգակն այս լուսի,  
 Այս պայքանրը, աշխարհը, սաալինյան այս դանրը...  
 Այս յերդերը, մրդերը, այս կրքերը, գրքերը,  
 Ծաղիկները բազմազուն, բազմայերանդ, բազմարույր  
 Գիտության ու արվեստի լուսազազաթ լեռները,  
 Ելբրուսները բարձրաբերձ ու մեր ծովերը կապույտ...  
 Արկաթկայի սառցաշունչ հետունները ձյուննիզն,  
 Սարատոսֆերը լռանխառ և ընդերքները յերկրի,  
 Յեզ այն ինչ վոր մարդկային միտքը դեռ չի, չի,  
պեղել  
 Յեզ ինչ վոր նոր դեռ պիտի կյանքում շողա ու  
բերկրի...

Քննն են, քննն են բոլորը . . . ինչ վոր վնու ե աշ-  
խարհում

Քեզ համար ե լինինյան յերխտասարդ իմ բանակ,  
Նվածիր դու ամենը դասակարգի արշավում

Յեզ քանդակիր քո գեմքը, ե՛ գեղեցիկ, ե՛ անամպ:

Ապշերոնի նավթածեփի վիշկաներից մինչ Միբիր,

Մինչև Յավան, ապստոմբ ավադները Սուդանի,

Մինչև Ռուրը գործադուրկ ու ջրերը Միսիսիպի,

Քո բազմացեզ գնդերն են քայլում վոնց մի ըն-  
տանիք . . .

Ու թե փորձե արունոտ կրունկը կոխե թշնամին,

Հայրենիքիդ յեզերքն անմատչելի, անգրավ—

Կենես գիտեմ դու վորպես մի շունչ, մի սիրտ,  
մի մարմին—

Հոկտեմբերյան շառաչը կերպե տշխարհի վրա . . .

Հնչիր, հնչիր դու անտհ, ամբողջ, ամբողջ աշխարհում,

Յերխտասարդ իմ բանակ, յերխտասարդ իմ արյուն . . .

## Հ Ո Ւ Շ

Կապույտ գիշերը իմ սիրտն ե խուժում,  
 Հուշում մեր կովի վերջին որերը,  
 Մեր գյուղը կորած լեռների մութում,  
 Ու տխուր լացը սգավոր մորս . . .

Տեսնում եմ նրան ահա յես նորից,  
 Աչքերը ալի արցունքներով թաց,  
 Գեախ վշտոցը միգապատ ձորից  
 Ու Ֆրոնտային մի վերագարձ . . .

Ահա նա, մայրս, ինձ գիրկը առած,  
 Համբուրում ե դորշ շինելը հազիս,  
 — Բոլշեվիկ տղաս, իմ կորած բալնս,  
 Յեղբորդ տարան արեվածագին . . .

Խլեցին կովը, խիին յեղբորդ,—  
 Մեծում ե մայրս ծնկերն իր չոր,  
 Ու հեծեծանքն ե լսում մորս,  
 Սիրտս՝ յեղբորս կորուստով շնչող . . .

—Մի լն, մայրիկս, արցունք մի ցանի,  
Լսում ես լեռները ահա թնդում են,—  
Են մեր բանակն ե կարմիր աստղանի,  
Քան լում են նրանց վերջին բույնը . . .

Են քո վորդիներն են մայր իմ, գալիս,  
Կապույտ լեռներով, ձյուների միջով,  
Իզուր ես, մայր իմ, իզուր ես լալիս,  
Իզուր ես ծեծում ծնկերը քո չոր . . .

Կապույտ գիշերը իմ սիրտն ե խուժում,  
Հուշում մեր կովի վերջին որերը,  
Մեր գյուղը կորած լեռների մուժում  
Ու արցունքները սգավոր մորս . . .

Հ Ր Ա Փ Ե Շ Տ

(ԵՔՍՊՐՈՄՏ)

Մնաս բարով Պետիպարսկի,  
Ո՛ր, բուժման դու որբան թովիչ,  
Ո՛ր, քույր, ս, սեր մեր հանդստի,  
Ո՛ր, քաղաք դու Լեբմոնտովի . . .

Ո՛ր, թավիչն կանաչ Մաշուկ,  
Ո՛ր, պուրակնե՛ր, սաղարթախիտ,  
Ո՛ր, անձրեֆներ թաց սրամաշուկ,  
Ո՛ր, հիվանդի բարակ թախիճ . . .


Յե՛վ դու այգիներում կորած  
Սվերդլովի սանատորին,  
Յե՛վ դուք Վարին, Վալին, Ոլին  
Յե՛վ Դոնբասի տղերք ունի . . .

Վալեյրովի Չերմ խաղերով,  
Ուկրաինական ՉինՉ տաղերով,  
Ծաղիկների ցող-շաղերով,  
Հրածեշախի խոր «սխերով» . . .


Կենսաք դուք իմ հուշերում,  
Իբրև յերգիս պայծառ նվեր,  
Յե՛ղ կապուտակ այս լուրթ հետուն,  
Յե՛ղ պոետի արձանը վեհ . . .

Յե՛ղ վարդերն այս արձանի շուրջ,  
Ձյունի նման ճերմակ փռված,  
Վոր անունն են նրա շրշում  
Ու յերգերը, մահը նրա:

Մննո՛ւ բարով Պետիգորակի,  
Ո՛ր, բուժման դու որբան թովիչ  
Ո՛ր, քնյր, ս, սեր մեր հանգստի,  
Ո՛ր, քաղաք դու Լերմոնտովի:



III.



Մ Ե Ն Ք Ո Ւ Թ Ո Ւ Մ Ա Ն Յ Ա Ն Ը

I

Դո արևային նվազների,  
Խշշուն յերգերի տակից ահա  
Ինձ հմայում ե չքնաղ Լոռիդ  
Ու արեվը նրա, վորպես վահան:

Դերեղն ե ահա ահեղ վշշում,  
Ու ալիքները փշրում իրար,  
Զորերը լիքը մուժ ու մշուշ,  
Ժայռերը թիկնած իրար վրա:

Գաջքերն են կախվել ահա փեշից,  
Աժդահա ու մեծ են չորանի,  
Յերգիկում խեղդվեց մի ջինջ լուսին,  
Դաշտում վրնջաց աշնան քամին:

Ու հորովին ե հնչում դաշտից  
Ազոթքի նման ախուր ու թեն,  
Հողի վորդին ե խեղդվում վշաից—  
Սովը յեկել ե, տունը մտել:

Ու զանգն և ժամի խուլ հեկեկում  
Մի քանի հողե հյուզի վրա,  
Խավարն և զանգաղ ահա չսքում,  
Գյուզը վառում և... յերկու ճրագ:

Հետո թխաչյա այն աղջիկն և  
Ամպոտ սարերենն բացվում իմ դեմ,  
Վառվառուն սեղը դեմքն և շիկնել,  
Շրթերին վառել վարդե՛ր, վարդե՛ր:

Գիքորն և ահա հրաժեշտ տալիս,  
Հայրենի պայծառ հողին, քարին,  
Ու կապույտ միզում մայրն և լալիս,  
Գալուն և կանչում իր «Գիքոլին»:

Փռում և յերգիդ կլինո-լենտը,  
Փռում են լեռներն ահա վճիտ,  
Ըմպում եմ նրանց շունչը թեթեվ,  
Պոեմներիդ ջինջ, կապույտ լճից:

Յեղար խնդուն դու, յեղար լուսե,  
(որերի թախիժը, վորպես թույն մի)  
Ու յերգդ, յերգդ վարար հոսեց,  
Ինչպես լեռներից զարկվող քամին:

Նա շողշողել ու վողողել և,  
Սրտիս ասիբը խնդուն արդեն,  
Եխ, նրա պայծառ—ջինջ տողերը՝  
Արտերում կորած արահետներ:

Քո հին լեռների փոշոս գոտով  
 Ուր հովիւ եր, հովիւ եր միայն շնչում,—  
 Շնչում ե հիմա հազար ոթո,  
 Ու դեռ պողպատե քանի թռչուն...

Ուր մզլած վանքն ե դառանցել,  
 Թափել անխնա իրա թույնը,—  
 Մենք շոսսեներ ենք ահա բացել,  
 Այնտեղ մեր յերգն ե դրել իր բույնը:

Յեզ դաշտերում այն չլուս ու չոր,  
 Ուր վոր ծղրիզը ինչ վոր յերգեց,—  
 Շողեզութանն ե շոգ-շոգ շնչում,  
 Ու ջրանցքներն են արտը գրկել:

Յեզ դինամիտն ե անդուշ յերգում,  
 Փլչում սարերը քո ներբողած,  
 Խոսում ե հողը նոր մի յերգով,  
 Նոր ջրերով այս վողողված:

Ու սուր սուլիչն ե ահա ձայնում,  
 Պատում շապիկը կապույտ մեզի...  
 (Ինչքանս ես սպասել, սեր իմ անուշ  
 Նրա հռչուռն յերկաթ յերգին):

Յելնում ե կյանքը հին ափերից,  
 Հորդում ջրերը ալիք-ալիք,

Ծփում ե հանդը, արաը բերրի,  
Ու բողբոջում ե անձկալին:

Ուր վոր քաջքերն են միայն պարել,  
Ուր դեղերել ե Հիսուս մի սին,  
Կբացվի վաղը հազար լուսին,  
Ելեքարահան հազար արեվ:

3

\* \* \*

Յերգերիդ յերկնքի տակ  
Յերկրիդ արեփն և շողում,  
Քո չքնաղ սարերն հն շողում,  
Յերգերիդ յերկնքի տակ...

Կմնան միշտ ջինջ ու հստակ  
Տողերիդ բասերը շողուն,  
Յերկրիդ արեփը շողուն, —  
Յերգերիդ յերկնքի տակ...

\* \* \*

Շողշողում են մեր հույսերը  
Թումանյանի մութ ձորերում,  
Տուրբինների յերգ ու սերը,  
Թումանյանի մութ ձորերում:  
Ա՛խ սև հս պետք ձեթի ճրագ,  
Ա՛խ սև հս պետք մարխի կրակ,  
Ծիծաղում են յերբ լույսերը,  
Թումանյանի մութ ձորերում:

Ա. Վ. Ե Տ Ի Ք Ի Ս Ա. Հ Ա. Կ Յ Ա. Ն Ի Ն

Յեղա յես Մանթաշում,  
Ալաղյաղում յեղա,  
Մի խշխշուն աշուն  
Դրել եր ջինջ յեղյամ. . .

Ու խաղում եր հովը,  
(վոր անցավ քո յերգով),  
Մշուշն ելի ծով եր,  
Ու յերկինքը՝ լուրթ քող. . .

Ու կախված եր ելի  
Յերկնքի առաստղից,  
Արեվը սիրելի,  
Շողուն, առանց թախիծ. . .

Ու Մասիսը թաղած  
Զիրուխը ամպերում,  
Ու դաշտերը խաղաղ,  
Ու արտերի հեռուն. . .

Այս պեյգածը լուսե  
Դու շատ լավ դժեկ ես,

Բայց եզ որը ինձ հուզեց  
Արթիկի դժերը . . .

Բանում էյին այնտեղ  
Ընկերներս բանվոր,  
Հողի սիրտը քանդել,  
Քարեր էյին հանում . . .

Քարեր, վարպետ, վարպետ,  
Կարմիր ու արնագույն—  
Վարդեր, վարդեր, վարդեր,  
Բացված հողի կրճքում . . .

Քանդում էյին նրանք  
(քարհատ ընկերներս),  
Այդ քարը հուրհրան  
Լցնում վազոնները . . .

Ճամբում էյին հետո  
Վազոնները բարձած,  
Մեծ միության տենդոտ  
Քաղաքներն ընդարձակ . . .

Գիտեմ, Յերեվանում,  
Թիֆլիսում կամ Բազում,  
Լույս հարկեր կառնան  
Քարերն այդ վարդագույն . . .

Յեւ թո յերզած Զարոն  
Սիրելի իմ վաշպետ,  
Վոր Ալազյազ սարում,  
Քաղիկ և վառ վարդեր. . .

Ու տարիկ և սակայն  
Մզլած մի ողայում,—  
Կապրի այդ տուֆաքար }  
Հարկեբում հմայուն. . .

Կսովորի ինձ հետ  
Մի լսարանում,  
Յես կսիրեմ վարպետ,  
Աչքերն իր ջինջ, անուշ. . .

Յեղա յես Մանթաշում,  
Ալազյազում յեղա,  
Մի խշխշուն աշուն  
Դրել եր ջինջ յեղյամ. . .

## Մ Ա Ք Ս Ի Մ Գ Ո Ր Կ ՈՒ Ն

Թերթում եմ ահա քո կյանքը Գորկի,  
Թվում է յերկրիս կյանքն եմ թերթում,  
Ու պոռթկում ե իմ սրտի խորքից  
Անցյալի դեմը անմար մի թույն:

Դու մերթ մի ըմբոստ. Չելկաշ ես յեղել,  
Մերթ նավի վրա մի խոհարար,  
Ու որորվել ես վորպես մի յեղեղ,  
Ու քշվել ինչքան հուլսիս ու հարավ:

Դոփել ես բոլոր անկյունները սեւ,  
Խորշերը բոլոր դոփել ես կյանքի,  
Յեւնոդ հատակի ձայները լսել,  
Պայքարով վնարել նոր նավհանպիստ:

Կռիվն է յեղել քո կյանքի քույրը,  
Ու մոլոր ուղին թափառահանի,  
Քեզ ծանոթ է յեւլ հարավի հուրը,  
Յեւլ տայգաների ձյունախառ քամին:

Ձեռքիդ բռնած ցուպ, մաղախ մի ուսած,  
Աչքերիդ խորքում յերկինք մի ամպոտ,—  
Շրջել ես ամբողջ, Ռուսիան ամբողջ,  
Ու դեզերել ես վորպես մի բոսյակ:

Ինչքան ես քսել վոտքերը քո մերկ  
Արահտոնների ցեխին ու քարին,  
Ու սրտիդ վորպես անթափանց մի մեպ,  
Մուժն ե ծանրացել թունոտ անցյալի:

Անձրեմն ե թափել ու ձյունի փոշին  
Մաղերիդ վրա ու հոգուտ վրա,  
Բայց ելի, ելի անցել ես մուժից, —  
Ցարական մուժից, յե՛վ գորշ, յե՛վ մռայլ:

Նստել ես դաժան բանտը Մետեխի,  
Ուր նստել ե մեր ապստամբ կամոն,  
Վոտքերի վրա շղթաներ դեղին,  
Մեջքին մտրակը արնոտ թշնամու:

Ու բարձրացել ես մի որ բարրիկադ  
Փոթորիկներով լիքը հինգ թվին,  
Ու վորպես մեր այն կովի բարեկամ,  
Գրիչդ դարձրել շողշողուն սվին:

Ու յերբ ընկել են մերոնք դիրքերում,  
Ու կաղակը մեր զնդերն ե ցրել—  
Հավատով ելի նայել ես հեռուն,  
Ու մըրկալից յերգեր ես գրել:

Ու յեղբայրական վողջույնս ես նկատել  
Հեղափոխութեան մըրկահատվին,  
Յերգել ես նրա թռչնքը թեթևվ  
Ու փրփրագեղ ջրերը ծովի:

Ինչքան ել հեռու, հեռու լինես դու  
Անտափ ջրերից ինչքան ել են կողմ,—  
Մեզ հետ ես ելի, մեր կարմիր յերթում,  
Ու պայքարում ես տողերիդ զննքով:

Մեզ հետ ես ելի Կապրիից մինչև  
Կասպից ջրերի կանաչ հայելին,  
Ու ճակատում ես ցատումով մի ջերմ,  
Ու մանկան նման առույդ ես ելի:

Ընդունում ենք մենք յերկերդ բոլոր,  
Յերգերդ բոլոր, սիրելի Գորկին,  
Վորպես պայքարի ու կովի զբոշ,  
Վորպես զնգացիր Լենինյան գորգի:

Ու վեպիկներդ, վեպերդ առույզ,  
Ու պիեսներդ վոր լիքն են մաղձով,  
Ու հողվածներիդ թափը վարարուն  
Ընդունում ենք մենք, մեր սրտի բոցով:

Ընդունում ենք մենք, մենք ընդունում ենք,  
Ստորակետները անգամ նրանց,  
Ու քեզ հետ մեկտեղ մենք գրոհում ենք  
Անցյալի բոլոր բերդերի վրա:

## ՔՈՌՅԱԿՆԵՐ ՖԵՐԴՈՎՍՈՒՆ

Ֆարսի բուլբուլը, անմահ Ֆերդուսին...

ՀՈՎ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

Մեր պոետը մի ուր հուզվեց,  
Սիրեց վոսկե քո դալամը,  
Վարդեա անհուն կարոտ ու սեր,  
Սիրեց վոսկե քո դալամը,  
Ասավ այնքան հուր կա, արե՛վ,  
Տողերի տակ քո յերգերի,  
Ինքն ել հյուսեց յերգեր լուսե,  
Սիրեց վոսկե քո դալամը...

Դու նման ես աշնան գինու  
Ասավ յերգով քո հարբել եմ  
Մրգով լիքը վոսկե սինու  
Ասավ յերգով քո հարբել եմ  
Հեքյաթային ազրյուրի պես  
Կարկաչում ես պարզ ու զուլալ,  
Թե՛ «Շահնամե»-դ ես հինում,  
Ասավ յերգով քո հարբել եմ...

Դու հորդուն դեռ յեկար, անցար  
Վոսկե ավաղ թողած ափիդ,  
Լեզենդներում մշուշ դարձար—  
Վոսկե ավաղ թողած ափիդ.  
Յերկրիդ շահը, նրա դահը,  
Կցնդեն մեր մարտի փոշում,  
Դու կմնաս սակայն պայծառ  
Վոսկե ավաղ թողած ափիդ . . .

Աշխարհը մեր վառ կլինի  
Ես ե մեր մեծ յերգը հանճար.  
Ամեն չարի քար կլինի,  
Ես ե մեր մեծ յերգը հանճար  
Տարիները կանցնեն վազքով,  
Կյանքն ուրախ ցնծուն թառի  
Զվարթաձայն լար կլինի  
Ես ե մեր մեծ յերգը հանճար:

Ինչ վոր հին ե դեռ կցնդե՛  
Անիմաստ մի ցնորքի նման,  
Առորյան մեր կշողշողա  
Մեր յերազած նորքի նման,  
Նորորյա իմ նոր յերկիրը  
Հազար գուսան դեռ կ'ծնի,—  
Կերդեն իրա նոր յերգերը  
Քո վեհ, անհաս շնորքի նման . . .

Դու նման ես անտակ լճի,  
Այնքան խորն ե յերգիդ հունը,  
Ամբան լճի նման վճիտ,  
Այնքան խորն ե յերգիդ հունը,  
Ինչքան վառ ե քո անունը,  
Նույնքան դարձ քո անգույն եր—  
Այս իմ դարն ե հանում վճիտ,  
Այնքան խորն ե յերգիդ հունը:

Հ Ա Յ Ն Ր Ի Խ Հ Ա Յ Ն Ն Յ Ի Ն

Հնչնե, յերգերի խշխշուն այգի,  
Հաչնե, մրդերի խշխշուն այգի,  
Հնչնե, կրքերի խշխշուն այգի,  
Հնչնե, մտքերի խշխշուն այգի,—  
Ուզում եմ լսել յիս լիբիկ ձայնդ . . .

Մեր խորհրդային աստղերի ներքո  
Յիս յերիտասարդ պսևս մի անփորձ,—  
Ուզում եմ լսել յերգերդ յերգող,—  
Գնալ լիբիկմի արեվոս ճամբով . . .

Ուզում եմ միայն, քեզ միայն զգամ,  
Հին պոետների կանաչ անտառում,  
Խոսքերդ քո պնդրդ, հույզերդ հատակ,  
Մտքերդ վորպես լեռնային ատու . . .

Քո պոետական ժանրերը, անխ, քո,  
Այնքան բազմազան ու բազմայերանգ,  
Յերգիդ մարդերը, վոր լիքն են ծաղկով,  
Մրտենիներով, վարդերով յերազ . . .

Ու բալլադներդ, և՛ պանրդ, և՛ հնչուճ,   
Յե՛վ ինտերմեցող աշնքան հմայիչ, —   
Խշրու՛մ են իմ մեջ, իմ սրտու՛մ հնչում,   
Ինչպե՛ս յերազու՛ն մի կապուլյտ մայիս . . .

Ինչ վոք գրե՛լ ես քո դարում դաժան,   
Գու՛ ծերու՛կ Մարքսի ջերմ շնչի ներքո —   
Բարձրացնում ենք վորպե՛ս գրողակ   
Ներկված՝ մեր սրբյան՝ շողշողուն ներկով . . .

Ու հոնոսի ջրերը լուսե,   
Վորի ափին՝ դու կարգերի դեմ սե,   
Պամֆլետներս ես սնւր մի որ հյուսե՛լ,   
Ու Մարքսի հետ արտաքսվե՛լ . . .

Հայնե, յերգերի խշխշուն այգի,   
Հայնե, մրդերի խշխշուն այգի,   
Հայնե, կրքերի խշխշուն այգի,   
Հայնե, մտքերի խշխշուն այգի .


## ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐՈՒՆ

*„Մրգահասըզ“ կարգացի, Գուրգեն Մահարի  
Սիրտս յերգովզ թաց ե, Գուրգեն Մահարի,  
Տողերում քո զգացի յես կարտազ լուսեղեն  
Ու ծիծաղզ ու լացզ, Գուրգեն Մահարի:*

*Կառուցման լուսաբացին մեր յերգերի արտերում  
Նոր ջրանցքներ դու բացիր, Գուրգեն Մահարի,  
Նրանց ջրերն են խշշում՝ իմ սրտում ու իմ հոգում,  
Ու քնքուշության ակացին, Գուրգեն Մահարի:*

*Բայց յերբ մարտը շառաչի դու կղարձնես, յես գիտեմ,  
Քո քնարը՝ զնդացիր, Գուրգեն Մահարի:*

IV.



ՊՈՆՏԻ, ՆՐԱ ՍԻՐՈ ՅԵՎ ՄԻ  
ԽՄԲԱԳՐԻ ՊԱՏՎԵՐԻ ՄԱՍԻՆ

Խշշում և խճ մեջ, իմ սիրտը բաղխում  
Սե՛րը, ախ սե՛րը, սե՛րը շողշողուն,  
Ու հորձանում և թափով մի հախուն  
Իմ գլխավոր գլխը ձախողում:

\* \* \*

Սյապես՝ ուզում եմ մշակել ասե՛նք,  
Սրտադրական մի թարմ թեմա,  
Մեկ ել պոեմը. յես դեռ չսկսել  
Դեմս կանգնում ե... Եմման:

— Իմ սե՛ր, իմ կարճա, իմ լիբլիկ պոեմ, —  
Հնչում և մեջս նրա ջինջ ձայնը —  
Նստի՛ր, իմ մասին սոնետներ շոյե  
Յե՛վ դու կդառնաս պրոլետ... Հայնի:

Յերգի՛ր, տարիքիդ խշշուն արյունով,  
Հնչյուն ավյունով կանաչ հասակիդ,  
Մեր սե՛րը, սիրո՞ գարունը,  
Յե՛վ ընկերներին քո գասակի...

Հիշում ես մի որ քեզ հետ միասին,  
Դեռ դպրոցական հասակից այն ջինջ  
Կարգացել ենք մենք ծերուկ ՄԱՐՔՍԻՆ,—  
Մտերմությամբ մի և՛ խոր, և՛ անջինջ,

Ու հետո մի պարզ, մի ձյուն յերեկո,  
Պրոֆբյուրոյի փողովից հետո,  
Դպրոցի այգու աքասու ներքո,  
Դու բաց ես արել ինձ սիրտդ արատում:

Աքասու տակ այն, այն կապույտ ցրտում  
Կարգացել ես ինձ դադելները քո,  
Իսկ ձյունը մաղել ե, խաղանդ, անդորր,  
Մեր շուրջը փռել մի ճերմակ քող . . .

Արդեն անցել ե, արդեն հոսել ե  
Պատանեկական հասակն այն արդեն,  
Ու ջահելության շողուն լույսերն են,  
Կանաչ ջրերն են, շառաչում մեր դեմ:

Արդեն պոետ ես դու դարձել հիմա,  
Յեւ, քո յերգերիդ մատներով փնջիր,  
Մեր սրտի, սիրո վարդերը ջինջ,  
Ծաղիկներն այս վառ բացված մեր դիմաց»:

Եմման խոսում ե, իսկ յես լսում ես  
Նրա ձայնը ջինջ աղբույրի նման,

Ու պոետական ներսում իմ,  
Շարժվում ե քաղցր մի գգվող հմայք...

Շարժվում ե մի յերգ և՛ մոտ և՛ հեռու,  
Մի պայծառ հասակ անցած խաղով,  
Մի քնքուշ աղջիկ գանգուր մազերով,  
Հայացքով հստակ, աչքերով խաղող:  
Ու վորպես մի պարզ կապույտ յերազում

Այդ լավ աղջիկն մանուշակ փնջած,  
Մի ծաղկուն թփից ինձ մոտ ե վազում  
Ու աղջկական դովանքով մի չար  
Համբուրում ե իմ շրթերը հասուն:

Յես տեսնում եմ իր համբույրում լճակ,  
Մանուշակի պես յերկինքը լազուր,  
Հետո արեվը կապույտ, յերազուն:  
Ռոմանտիկայի այս քաղցր ժամին

Հնչում ե հանկարծ իմ հեռախոսը,  
Առնում եմ փողը շտապ, անհանգիստ,  
— Ի՞նչ... Բանբակացան մեր շեֆ կոլխոզը...  
— Կատարել է՞ իր կոնտրոլ թվերը,

— Մենատնտեսները դիմումներ գրե՞լ  
— Կոլխոզվարչության արդեն տվել ե՞ն...  
— Շտապ մի փոքրիկ պոեմա գրե՞մ...  
— Ժամկետը ինչքան,

—Հենց ես գիշերը...

—Գծվել ես, ինչ ե, ընկեր խմբագիր,  
Սենյակս լցվեն, թե մուսաները—  
Ելի չեմ կարող դուրս գալ տակից...

\* \* \*

Նստիս դառնում ե իմ յերգի թեման  
Բամբակի հասուն արտը հիմա,  
Ամեն մի թուփը թվում ե Նմմա—  
Մի կապույտ գիշեր ծաղկած իմ գիմաց...

Բամբակի մաքուր ամեն մի քուլան  
Թվում ե նրա սպարդ, ամառային,  
Ճերմակ շորերը շրշուն ե ուրախ,  
Յե՛վ այնքան, այնքան, այնքան հմայիչ...

Ափերով հոսող ջրանցքը կապույտ  
Թվում ե նրա ծիծաղը հնչուն,  
Թվում են նրա մաղերը անփույթ  
Դեղին հասկերը արտերի միջում:

\* \* \*

Ելի նույն սերն ե, ելի նույն Նմման,  
Թեև նոր թեմա «պայքար» ե, «կոլխոզ»  
Մաղերով դանդուր աչքերով խաղող,  
Ելի նույն սերն ե, ելի իմ Նմման:

Նա քրքջում ե ահա իմ գիմաց  
Կոլխոզի արտի կանալի պես խոր,

Ելի նույն սերն ե, ելի իմ Եմման,  
Թեև նոր թեմա «Պայքար» ե, «Կոլխոզ»:

\* \* \*

Անցավ զիշերը, զիշերվա մութը,  
Սյգաբացն արգեն, արգեն մոտ ե,  
Կբաղխի շուտով լուսամուտս  
Արևի մասներով առավոտը...

Գնամ, ինչ ասեմ յես խմբազրիս,  
Եմմայիս մասին նա յերգ չի տպի,  
Նրան յերգ ե պեաք կոլխոզի, տեմպի,  
Գնամ, ինչ ասեմ յես խմբազրիս...

Փշրվիլը, շողուն իմ լիրիկ գրնչ,  
Ինչ ես կախվիլ սիրտ դու սիրտ թփից  
Գնամ, ինչ ասեմ յես խմբազրիս  
Եմմայիս մասին նա յերգ չի տպի:

\* \* \*

Խշռում ե իմ մեջ իմ սիրտը բախում  
Սերը, ախ սերը, սերը շողշողուն  
Ու հորձանում ե թափով մի հախուռն  
Ու իմ գլխավոր գիծը ձախողում

ԲԱՆԱԳ ՄԻ ԹՐԹՈՒՀՈՒ, ՆՐԱ ՀՈՐ,  
ԱԻՐԱԾ ՏՂԻ ԳԱՐՆԱՆ ՋՐԵՐԻ  
ՅԵՎ, ՁԻՆԱՐԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Շողացել ե լեռների ուսին  
Ծրարված կապույտ ամպով,  
Մի գունատ, մի տխուր լուսին  
Մենավոր ու ինքնամփոփ . . .  
Ջարիֆն,  
Լուսինն այդ դու յես յեղել,  
Այդ ամպը՝ բո չադրեն.  
Գյուղը ջիջը քեզ փորձ ե տվել,  
Առաջ ե մղել—  
Դու չադրեզ նետել ես դեն . . .  
Մի կապույտ իրիկուն ե յեղել,  
Մի խաղաղ իրիկուն,  
Անչադրա,  
Քո սիրած կոմսոմոլ աղեն,  
Բջջից բերել ե քեզ տուն . . .  
Հայրդ գիշերվա կեսին,  
Քեզ դուրս ե քշել տնից.  
— Հե՛յ, դանջդ,  
Ուր թողիր քողը յերեսիդ,

Ինչ շեյթան ծնեցիր կնիկ . . .  
Զթողնես լրբին եղ իմ տունը,  
Հայրական հարկս չթողնես,  
Կասակացնեմ վոնց վոր շունը,  
Իմ դռան հողը թե կոխեց:  
Մայրդ՝ հեծեծել ե խուլ,  
(Եղ կապույտ իրիկուն),  
Դրսում խշշացել են,  
Առունքը ախուր,  
Ղշաղը ննջել ե միգում:

II

Եղ իրիկուն,  
Աչքերիդ արցունքալի,  
Թվացել ե ձեր դռան բաղչի,  
Որորվող, խշշուն չինարին, —  
Տնից քշված մի աղջիկ . . .  
Լուսացրել ես եղ գիշերը դու,  
Գյուղհրահանդչուհու տանը,  
Մազերդ խուլի, աչքերդ տրտում,  
Ու դեմքդ վոնց վոր քաթանը . . .  
Առավոտը Լ. Կ. Յե. Մ. Շրջկումը,  
Դեզ գործուղվել ե Բագու,  
— Թող Զարիֆա հորդ . . . գոմը,  
Գնան դու,  
Ուսում սու Բագվում.  
Գնան դու, լավ սովորիր,

Կալարտես՝ կզաս գյուղ,  
Կաշխատես կոլխողում ու քո հորից  
Ձես քաշի ա՛ն ու յերկյուղ . . .  
Տղերքը գնացք են քեզ գրեկ,  
Տխրել ե մեկը իր սրտում,  
— Շուտ-շուտ նամակներ կգրես, —  
Շշնջացել ե նա տրտում . . .  
— Ու հետո քեզ լավ կպահես  
Ձմրես . . . հիվանդանոս,  
Իսկ յես — ասել ե եղ տղեն ջահել —  
Տրակտորի կուրսեր կգնամ . . .

III

Հետո յեկել ե աշունը .  
Խշշունն ու բերքառաս,  
Կարդացել են տղերքն անունդ,  
Տեսել են գեղեցիկ նկարդ,  
Գաղեթում նկարած . . .  
Քո սիրած կոմսոմոլ տղեն  
Գաղեթից կարել ե նկարդ,  
Խրճիթի պատին կպցրել  
Ու փորձել ե ինքն ել քեզ նկարել . . .

Յերբ նրան աշնան մի որ ել  
Բանակ և կանչել կոմիտարը՝  
Ծալել և ծոցում դրել  
Ու բանակ և տարել նկարդ...  
Կոլխոզում յերգեր են հյուսել  
Կոմսոմոլները քո մասին.  
—Ազրոնում ես դառնալու իմ սեր,  
Ու դյուզ ևս դալու ասին...

.....  
Ազմկում են դարնան ջրերն,  
Չինարներն ձիգ յեվ ուղիղ  
Չարիֆն,  
Իմ բոլոր թուրքուհի քույրերը  
Բոնել են քո կանաչ ուղին:

Ե Լ Ե Գ Ի Ա.

Գարունն և խշշում: Գարունն իմ քույրն և,  
 Սիրած աղջիկն և կանաչ շորերով,  
 Յերկիրնքը նրա ջինջ ու մաքուր և,  
 Լցվացած կապույտ անձրեվի ջրով:  
 Գարուն և խշշում: Յերկնակամարից  
 Գարնան արեվը շողերն իր փնջած,  
 Շռայլությամբ մի թափում և ցած՝  
 Ծառերի վրա կանաչ բուլվարի. . .  
 Բուլվարում ահա, բուրում են ահա  
 Ծաղիկները վառ արեվով տարված.  
 Ինչքան անմիտ ես դառնում դու մահ,  
 Ծլումի, ծաղկման պահին այս տարվա. . .  
 Ուսանողական փոքրիկ սենյակում,  
 Ուսանողական վերմակի տակին,  
 Հանգչում ե ահա մազերով դանդուր,  
 Տասնութ տարեկան ընկերն իմ անդին. . .  
 Յեվ մահացողի աչքերով տրտում  
 Նա յերազում և, հիմա յերազում,  
 Գարնան յերկիրնքը և՛ պարզ, և՛ անթուխպ,  
 Գարնան արեվը ցոլուն ու լազուր. . .

Գարնան ծով ամբը կանաչում կորած,  
 Ծովի ջրերը կաննչ, սրորձեն,  
 Լ՛նկերներն իրա անհող ու ուրախ,  
 Մտերիմները մոտիկ ու հեռու:  
 Ծիծաղով հնչուն, զվարթ ազմուկով  
 Համալսարանն և նրան յերազվում,  
 Գրական վեճեր՝ Հայնե ու Հյուզո,  
 Տերյան ու Բլոկ, Իսահակյան, Նազոն:  
 Ռեֆերատն և նա իր նոր հիշում,  
 Անավարտ ընկած սեղանի վրա,  
 Բանաստեղծութեան տետրը անշուք  
 Վոչ մի ժուրնալում չտպադրված:  
 Հիշում և հետո պայծառ մի հուշով  
 Ուրախ նխատերը իրենց բջջի,  
 Ու վորպես անմար շողշողուն մի շող  
 Այն լավ ազջկա աչքերը վճիտ:  
 Հիշում և, սիրտը լցվում և, ուռչում,  
 Հախուռն կարոտով դարնան ու կլանքի,  
 Ու թայրտում և վորպես մի թռչուն,  
 Մահվան տաղնապով խոր ու անհանդիստ...  
 Նա կուզեր հիմա պոկվել անկողնուց,  
 Ծովափը թռչել, վազվզել, խաղան,  
 Գրկել վարդերի թփերը շողուն,  
 Լողանլ, ծփծփանլ ծովումը խաղաղ...  
 Պատկենլ, թավալվենլ դեղին ավազում,  
 Ավազի պես շեկ արեվի ներքո,  
 Զգանլ, շոշափել զարուն իմ լազուր,

Գեղեցկությունը, հմայքները քո...  
 Կուզեր, վոր ուրախ սագերի նման,  
 Ծովում լողացող թուխ մակույկների  
 ճողփյունից սիրաը ուռչեր, բարձրանար  
 Ու խնդությամբ նոր ծփծփար ելի:  
 Մմեն մակույկի, ամեն մի նավի,  
 Ամպի պես ճերմակ առագաստին,  
 Վողջույնն իր նետեր, կարտան իր ծովի,  
 Աղմուկը լսեր նավահանդստի...

Ա՛խ, ինչու մեռնել, ախր ինչ մեռնել,  
 Այնքան հմայքներ դեռ կա մեր կյանքում,  
 Ծանոթ, անծանոթ ափեր, ընկերներ,  
 Կարտաներ, սերեր, աղջիկներ գանդուր:  
 Այնքան «Ձեկուսկին» դեռ ծով կմանեն,  
 Կհատեն կապույտ լեռներ սառուցի,  
 Դեռ անհայտ այնքան ափեր կգանենք,—  
 Նոր կյանքը դեռ նոր, նոր կկառուցվի...

Դեռ մեկան այնքան գործուղղում ունի,  
 Դեռ այնքան քարտեր չլցված, անգին,  
 Կարող ե դառնալ դեռ լավ կոմունիստ,  
 Զինվոր ու հերոս պայքարի կյանքի:  
 Կարող ե դառնալ դեռ լավ մի պոետ,  
 Ա՛խ, լավ բանաստեղծ կարող ե դառնալ,  
 Մեր դարում ինչքան չգրված պոեմ,  
 Ինչքան յերգեր կան պայծառ ու վառման:  
 Իսկ ինքը ահա սենյակի փոշում

Վերմակի տակին լուռ մահանում ե. . .

Գուրսը արեվ ե, զարոնն ե խշտում—

Գարունն լմ քույրն ե, կանաչ զարունը. . .

## ՅԵՐԿՈՒ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆ

### 1.

Նախանձում եմ յես ձեզ խորհրդային  
Մանկիկներ իմ պայծառ, զվարթաձայն, ուրախ,  
Վոր ժպտում եք ահա, վորպես զվարթ մայիս,  
Կարկաչում մայիսյան ջրերի պես դուլալ:

Նախանձում եմ յես ձեզ, խոր նախանձում,  
Ու լցվում ե սիրտս,  
Հին որերի հուշով ու դառնությամբ անձուկ,  
Յեզ նրանով ինչ վոր մորմուքով եր, բիրտ եր:

Ահա դուք խաղում եք, աղմկում եք անահ,  
Ծաղիկների բույրով լիքը այս բուլվարում,  
Ձեր դեմ ահա, ձեր դեմ գլխարկներով կանաչ  
Ծառերը գլուխներն են իրենց թափահարում:

Յեզ արեֆն ահա իր գգվանքն ե ցանում  
Ջինջ յերկնքի բարձր-բարձր առաստաղից,  
Այրոսերը ամպերում պտույտներ են անում—  
Դուք նայում եք նրանց, քրքջում ծիծաղից:

Իիրժարլներն ահա, վորպես ճերմակ ամպեր,  
Լողում են յերկնքի կապուտակ կամարով,  
Ձեր հայացքը նրանք կապույտին են կապել,  
Ձեր ձեռքերն եք նրանց սիրով թափահարում:

Կարմիր հեքյաթներ եք լսում նրանց մասին,  
Ողաչուի մասին դուք յերգեր եք յերգում,  
Լսում են ձեր ձայնը, ծիծաղը լիասիրտ  
Ծաղիկները փթթուն, զվարթ ու բաղմագույն:

Ծաղիկներ եք դուք ել իմ յերկրի կյանքի,  
Ծաղիկների նման պայծառ ու թովիչ եք,  
Մանկիկներ իմ անուշ, բալիկներ իմ անդին,  
Պայծառ ձեր ժպիտը թող ձեր դեմքից չիջնե:

Ծլեցեք դուք, ծաղկեք, փթթեցեք, աճեք,  
Գովի թող ձեզ սիրով հարադատ մտուրը,  
Վոր պահեք դուք վաղը — դրոշը մեր նվաճեք,  
Բալիկներ իմ անուշ, դուք ինձ լսմամ եք:

Ուրախ յեղեք, յեղեք ցնծուն, անփույթ, անհող,  
Կարիքի ու սովի ու քաղցի անդիտակ,  
Ապրեք, հասակ քաշեք լի ու զվարթ կյանքով,  
Ու շնչեցեք յերկրիս ամեն մի աստղի տակ:

Վոր դառնաք դուք վաղը ողաչուններ, կամ ել  
Նալատախներ կարմիր մեր նավերի վրա,

Նավագործներ դառնաք, պարզեք չեղած կայմեր,  
Նոր նոր նավեր հանեք մեր ծովերում շուայլ:

Գրիչ առնեք, զրեք սոսմաներ, յերզեր,  
Իմ սողերից հաջող, հնչյուն, սքանչելի,  
Տրակտորիստ դառնաք, գնաք հողը հերկեք,  
Համայնական հանդի ու լեռնալանջերի:

Սահմանապահ դառնաք զգաստ ու աննահանջ  
Մեր յերկրի կապույտ սահմանների վրա,  
Զեռքերում հրացանը լիքը, արթուն պահած,  
Ափերը մեր հսկեք ջինջ աչքներդ սրած:

Լավ մարտիկներ լինեք մեր բանակի,  
Զյուններից ել ճերմակ մեր ձիերը նստեք,  
Ճամբար գնո՞ք, կապույտ լեռների քամակին  
Սովորեք թշնամուն գնդակներով սաստել . . .

2.

Ախ, յես ել եմ յեղել ձեզ պես մանկիկ, յես ել  
Ունեցել մանկություն, սակայն յերբ հիշում եմ,  
Լցվում ե սիրտս ամպով ու թախիծով մի սև,  
Յեվ մեր գյուղն եմ տեսնում լեռների մուժումը:

Ահա մայրս, ահա ուժատ, կորաքամակ,  
Իմ թվիցը բռնած ինձ նյոքար ե տալիս,  
Ու աչքերից իրա տխուր ու ամպամած՝  
Ցողանման աղի արցունքներ ե լալիս:

—Ախր ի՞նչ կա մեջ տեղ, վոր յիս վարձ ել  
դեռ տամ,  
Մի լակոտ ե հաղիվ վեց կամ յոթը տարու,  
Ապրելու յի հանդիստ, հացով լիքը մեր տան,  
Մալիս ու հանդիս ել վոչ մի շահ չի տալու:

Կաշխատի հինգ տարի: Բանը բան ցույց կտա,  
Հետո վարձ ել կլինի, մի բան ել ավելի—  
Ասում ե իմ սերը սեվ հոնքերը կիտած—  
Մի իթարում մորս անամոգ ցավերին:

Եսպես մորս լացով յիս բատրակ եմ մտնում,  
Դառնում եմ տիրոջս սագարածը,  
Պահում եմ սագերն իր ճերմակ, ձյունափետուր,  
Ու հսկում եմ նրա արտը, ագարակը:

3.

Առավոտը սագերը տանում եմ միշտ արոտ  
Ու իրիկվա մութին տուն եմ բերում նորից,  
Վոտքերիս մեջ վշեր, ծունկս քերված քարով,  
Իսկ սրտումս հայացքը անոգնական մոր իմ:

Կծկվում եմ գիշերը տիրոջս շան բնում  
Շան հետ, շան հետ մեկտեղ նույն «հարկի» տակ  
քնում,  
Յերկուսս ել հսկում ենք տիրոջս սագերին,  
Յեր՛ուսս ել մի կտոր հացի գերի:

Հասկանում ենք իրար, վոնց վորյերկու յեղբայր,  
Կիսում ենք իրար հետ մենք մեր բախտը անփայլ...

Յերկուսիս ել քաղցր խոր տանջում ե հաճախ,  
Լուսինը թվում է քաղցր, սքանչելի  
Կլոր մի հաց, կլոր, անուշահամ մի ճաթ,  
Կախված ջինջ յերկինքի անյեղբակն վերից:

Քնած են սագերը իրենց տաքուկ բնում,  
Տիրոջ սենյակից խումփոց ե լավում,  
Նա կերել է մի սաղ, նա հարբել է գինով—  
Գինու սաղի բույրը զգացվում է գեռ սուր:

Գիշերը կհալչի շուտով... նորից ելի,  
Յերեք հարյուր սագեր կքշեմ յես արտա,  
Տուն կդառնամ մութին, ծունկս քերված քարով,  
Կրունկներն իս վշեր, ցավեր անթվիլի:

Մայիսյան այն որը յերբեք չեմ մոռանա  
Տարիները ինչքան ել մշուշեն հուշերս,—  
Յերկինքը ելի ջինջ եր, պարզ, արեվնա, անամոլ  
Սակայն սիրտս եդ որ մթնեց, վոնց գիշերը...

Սագերի յերամը վորպես ամպեր ճերմակ  
Տարածվել եր ծաղկուն մի հարթավայր մարդով,  
Ու մայիսյան ճերմակ ծաղիկներին մերված,  
Քճուճն եր իր անում ուրախ ու ինքնագոհ:

Իսկ յես իմ մանկության ընկերների խմբով  
Իջա ձորը կապույտ մանուշակ քաղելու,

Վազվզելու ուրախ, պարելու, խաղալու,  
Անցնելու ինձ ծանոթ յուրաքանչյուր թփով:

Եղ որը մենք այնքան մանուշակ վնջեցինք  
Կապույտ, կապույտ, կապույտ ու յերկնագույն,  
Ու ձորի առվակի ջրով ել թրջեցինք—  
Ձեմ մուացել յես ձեզ, մանուշակներ մաքուր...

Յես ձորումը մնացի ախ եղ որն ամբողջ,  
Ու իրիկնաժամին ուրախ յելա ձորից,  
Հավաքեցի սագերն ու ինձ ծանոթ ճամբով  
Տուն բերեցի նորից:

Տերս սպասում եր ամեն որվա նման,  
Դուրս եր յեկել բակը սագերը հաշվելու,  
Յես մանուշակ տվի աղջկանը նրա  
Ու մի կողմ կանգնեցի քաշվելով:

Նա հաշվում եր մեկ, — մեկ, ամեն մի սագը,  
Հաշվածներին քարե հավանոցը քշում,  
Սահաջն բակը ելի սագերով ճերմակ եր,  
Ձեր վերջանում շուտ:

Հաշվեց, մեկ, — մեկ, հաշվեց ու հայացքը կախեց,  
— Յերեք հաար չկա, ուր ես թողիլ լակոտ,  
Յեկել ես սագ պահես թե մանուշակ քաղես,  
Ասաց փռեց ինձ զեաին— ծանր մի ապտակով:

Ու սկսեց մեջքս ու կողերս ծեծել,  
Ծեծել անագորուշն ինչ վոր թաց ճիպտով,  
Վոչ միայն յես ցավից հողիս ել հեծեծեց,  
Սակայն նա խփում եր, դեռ խփում եր տենդոտ:

Դեմս կանգնեց մոմե դունատ իր հայացքով,  
Լացն աչքերին անգոր, անոգնական մայրս,  
Մանկություն իմ, ի՞նչը ար յերգեմ յես քո,  
Ներբողեմ յես անի քո վոր չեղած վայլը . . .

Յես տիրոջս տնից եդ իրիկվան մութին,  
Մեջքիս վրա կապույտ հետք՝ ր—ճիպտաի,  
Փախա դաշտը մոտիկ, անտառը գնացի,  
Բարձրացա մի ծառ ու ծառին ել քնեցի:

Յոթ որ քաղցած—սոված մնացի անտառում,  
Յոթ որ ցավից մեջքս այրում եր, վառվում,  
Յոթերորդ որն ինձ յեկան, դտան, տարան,  
Արցունքներ եր լալիս մայրս անոգ պառավ:

Չգնացի ել յես իմ աղայի տունը,  
Ել սագերը նրա յես հանդը չտարա,  
Ու վառվում եր վոխս ու վրեժիս թուշը,—  
Այն որից ել գուցե յես կոմսոմոլ դառա:

Յեվ ո՞ւմ պետք եր դիմել վոր իմ տերն այդ դաժան  
Ինձ վոչ մի վարձ, վոչինչ, վոչինչ չտվից,

Վոր հանեց անգամ հազիս շալվարը հին, մաշած,  
Վոր ավել եր մի որ վորպես նվեր:

. . . . .  
. . . . .

Նախանձում եմ յիս ձեզ խորհրդային,  
Մանկիկներ իմ պայծառ գլարթաձայն, ուրախ,  
Վոր ժպտում եք ահա վորպես գլարթ մայիս,  
Կարկաչում մայիսյան ջրերի պես զուլալ:

Ք Ր Ո Ջ Պ Ա Տ Մ Վ Ա Ն Ք Ը

I  
Աչքերը սեւ, վոնց գիշեր  
Մաղերը ցրիվ,—  
Քաջ աղբերս ձին քշեց  
Ու գնաց կռիվ:  
Քաջ աղբորս ձին խաղաց—  
Սարերի քամի,  
Քաջ աղբերս բոլշևիկի,  
Պարտիզան կարմիր:  
Թողեց մենակ մեզ տանը,  
Սարեր բարձրացավ,  
Կողքից կապած նազանը,  
Մեջքին հրացան:  
Պառավ մերս լաց յիզավ,  
Յեղբորս ճամբին,  
Մի կարմիր քող յես կապի,  
Իր ձիու թամբից:  
Ինչքան բատրակ չքավոր,  
Տղերք քաջասիրտ,—  
Քաջ յեղբորս հետ յեղան  
Սարերը միասին:

Ով մարագում, դեղերում,  
Ձենք ուներ պահած,—  
Հանեց դաշնակների դեմ  
Կովի աննահանջ:  
Կորչի—ասին—կարգերը,  
Ալան-թալանի,  
Կարենք, մեր ջինջ լեռներից,  
Վտաքը թեւալանի:  
Վոր մեր մալը չքշեն,  
Մարերից, հանդից,  
Ել վոչ մի մառուղիստ,  
Ու վոչ մի բանդիտ:  
Եսպես յերգով բարձրաձայն,  
Մեկ տեղ, միասիրտ,  
Յեղբորս հետ բարձրացան,  
Մարերը միասին:

II

Ա՛խ, սարերում, լեռներում,  
Ձյունախառ ջրամի,  
Դաջ յեղբորս վտաքերը,  
Յուրաք կտանի:  
Ձյունից, ցրտից կսառեն,  
Ա՛խ, իր ձեռները,  
Ձյուն է կոխել ու դուման  
Տումա լեռները:  
Ա՛մպ է կոխել ու դուման

Բուք ու բորանում,  
Տասը աղջիկ մի գոմում  
Գուլպա յենք անում:  
Հաց ենք հունցում ու թխում  
Ղրկում սարերը. . .  
Հիմա վոր միտս են ընկնում,  
Ինչ, են որերը:  
Թեվանիստին ողնության  
Հասավ նժղեհը,  
Թալան գցեց գյուղերը,  
Ու հրդեհեց:  
Մի գիշեր ել խուժեցին  
Մեր գյուղը առան,  
Ռանչպար հորս բռնեցին  
Գեղամեջ տարան. . .  
Մատուղերը հանեց  
Խմբապետը սեվավոր,  
Խմբապետը սպանեց,  
Հորս ալեվոր:  
Հորս դիակը փռեց  
Դպրոցի բակում,  
(Նրա շիրիմին հիմա  
վարդեր են ծաղկում) . . .  
Տարան մեր յեզը մորթեցին,  
Ու քեֆ արին,  
Լաց եր կաթում մեր աչքից,

Ու սրտից՝ արին։  
Են սեւավոր, սեւ տարին,  
Ախ են որերը,  
Ինչեք, ինչեք ել չարին,  
Դաշնակ շները . . .  
Լիքն և սիրտս . . .  
Ախ, ենքան  
Բան կա հիշելու.  
Մի որ ել եդ լըրերը,  
Փախան դիշերով։  
Փախան։ Կանուխ առավոտ,  
Մերոնք գեղն առան.  
Քաջ աղբերս վերավոր,  
Մարից տուն դառավ։  
Յեկան իր քաջ ընկերներ,  
Ինքը կոմիտար եր,  
Կարմիր Բանակում սսես  
Կանաչ մի սար եր։  
Կարմիր Բանակ, վոր յեկավ  
Նրանց մհ յեկավ,  
Դաշնակ—մաշնակ ջոջերին  
Արյուն մահ յեկավ։  
Կարմիր Բանակը վոր յեկավ—  
Սրտներս բաց յեղավ,  
Ռանչտարին ազատ կյանք,  
Հալալ հաց յեղավ։

Կարմիր բանակ վոր յեկավ,  
Սարերէ գոշով,  
Մեր հաղթանակն եր յեկավ,  
Կարմիր գրոշով:

3

V.



Պ Ո Ն Տ Ն Ո Ւ Ք Ն Ն Ս Գ Ա Տ Ը

Սիրել և աչքերը նա գեղեցիկ կնոջ  
Ույերգել և, վորպես ամառվա ջինջ յերկինք,  
Դրա համար ել, — այդ հասարակ յերգի—  
Նախատել և նրան քննադատը իր նոր...

Դու շեղվել ես, — ասել և — կոմունիզմի ճամբից  
Գլորվում ես անդունդ յերթատասարդ պոե՛տ,  
Մի կտրդա ել Հայնե, Մեծարենց, Պոե —  
Բանաստեղծներին այդ՝ սիրո. թախծի, ամպի...

Պոետը չի լսել քննադատին յերբեք,  
Կշտամբանքին նրա, նախատանքին շռայլ, —  
Յերագել և, սիրել, ու ազջիկներ յերգել...

Քննադատը սիրով կտրդացել և նրան,  
Յնորել և ինքն ել սիրո մասին,  
Իսկ հողվածում պոետին... հարվածել և անսիրտ...

\* \* \*

Յեկել են պոետներ ու անցել,  
Պոետներ, քանի—քանի,  
Շատերը թողել են գանձեր,  
Շատերը միայն... քամի:

Ո՛ր, սիրա իմ, թե դու յեւ պիտի  
Թողնես լոկ հանգեր ու քամի,—  
Ավելի լավ ե կտրիր  
Քնարիդ լարերը միանգամից...

\* \* \*

Կոմունիստական յերկիր,  
Ու աստղեր, վարդեր դարնան...  
Ինչ ել կուզիս դու յերգիր,  
Մեկ և պոետ չես դառնա:

Թող պոետիան ու գնան,  
Դարձիր վարպետ մի շոֆեր,  
Քանի քննադատդ քնած,  
Ձի դարձնել բկիդ չոքել...

Աչքեր ունի շողշողուն, լիրիկական պոետ է,  
 Մազեր յերկար ու շողուն, լիրիկական պոետ է:

Միշտ արտում է, միշտ տխուր, վերաբերույի տակ ասես,  
 Լիրիկ սիրտ է մի մխում, լիրիկական պոետ է:

Քայլում է նա ներսուզված Լերմոնտովյան քայլվածքով,  
 Յերբ յելնում է նա փողոց, լիրիկական պոետ է:

Չյունը մազի, թե անձրեւ, բաց չի թողնի դեկադում  
 Պոետական մի ժողով լիրիկական պոետ է:

Ոոսք է բացվում յերբ շուրջը Սերգեյի կամ Տերյանի,  
 Ոոսում է սրտի դողով, լիրիկական պոետ է:

Մի գրպանում պահում է յերգերը մեր Մահարու,  
 Մյուսում մի շիշ ողի, լիրիկական պոետ է:

Հարբած լինեմ, ասում է, սոցիալիզմի աշխարհում,—  
 Յերգով, սիրով ու ողով, լիրիկական պոետ է:

Հանուն սրտի արվեստի ծեծել է քննադատին, —  
 Շարժել կռիվ ու բողոք լիրիկական պոետ է:

Բայց ասեցեք, ընկերներ, գրել է նա իր կյանքում,  
 Յերգի թեկուզ մի տող, ո՞, լիրիկական պոետ է:

Հիմա ավելի հեշտ ե յերկիր իմ,  
 Ինժեներ դառնալ, քան թե լավ պոետ,  
 Դժվար ե ավելի նոր յերգ յերգելը,  
 Կառուցել քան թե մի նոր շենք, ֆոյե...

Յե՛վ արդյո՞ք, արդյո՞ք դրանից չե,  
 Վոր իմ հույզերի ջրերն աղմկուն,  
 Իմ նվազներում, յերգերում բեկուն,  
 Հաճախ տխրությամբ թախծով են հնչել:

Յե՛վ յես փոխանակ յերգելու զվարթ,  
 Քո վեհ իմաստուն այս առորյան,  
 Յնորել ե մի Նլիզ, կամ Նվարդ,  
 Ու թախիժ խառնել իմ արյան...

Հիմա ավելի հեշտ ե յերկիր իմ,  
 Ինժեներ դառնալ, քան թե լավ պոետ,  
 Դժվար ե ավելի նոր յերգ յերգելը,  
 Կառուցել քան թե մի նոր շենք, ֆոյե...

## Յ Ե Ր Գ Յ Ե Ր Գ Ի Մ Ա Ս Ի Ն

Ո՛, սիրտ իմ սիրտ իմ յեղիբ անկաշկանդ,  
Ինչպե՞ս դարնանը փրփրուն Դոնը,  
Քո մեջ խշխշա թող մեր ներկան,  
Ու մեր այս կյանքը, վոր անթույն է:

Որերը լուսե սիրտ իմ, քեզ հետ են,  
Քեզ հետ է հողը շռայլ արևվը,  
Պշտում է կանանչ հույզերի գետը--  
Ջրիբ, նրանով յերգիդ ծառերը..

Ջրիբ, թող աճեն ու շյուղ առ շյուղ  
Ծաղկեն մայիսյան աստղերի ներքո,  
Ու վոսկեղեղին մի նախշուն աշուն.  
Ծանրաբեռնվեն հյուսթալից մրգով:

Վոր մրգաքաղին մի կանանչ հասակ,  
Մի ջահել աղջիկ, մի պայծառ ընկեր,  
Քաղելով ահա մրգերն այդ հասած  
Ասի.— ես ինչ լավ վորակյալ մերդ է:

Յ Ե Ր Գ Ե Ր Ի Ս

Յես միշտ ել, միշտ ել ձեզ եմ յերազում,  
Իմ քաղցրահնչուն յերգեր չգրված,  
Ամպերի նման մաքուր ու լազուր,  
Անձրեկի նման շռայլ:

Ծովափ եմ դնում ձեզ հետ միասին,  
Մահույկ եմ նստում, թիավարում եմ,  
Թախծում եմ, տխրում, խնդում լիասիրտ,  
Ձեզ հետ միասին, ձեզնով վառվում եմ:

Շնչում ե ձեզնով, ձեզնով հնչում ե  
Պայծառ հասակիս հորդուն արյունը,  
Քննար իմ գլխարթ, գլխարթ թռչուն իմ,  
Քոնն եմ յես, քոնն ե կանանչ գարունն այս:

Ինչ աղջիկ ել ինձ փայլի, փայլալայլի,  
Ինչ կարոտով ել վառի հույզերս —  
Ձի կարող յիրբեք, քեզ պես հմայի,  
Ձի բերի ինձ քո հմայքն ու սերը:

Յես իմ ընկերոջ սիրով կզիջեմ  
Իմ սրտիս սիրած Բիաթրիչեն,

Կարճաբ իմ վաս, սերը առաջին—  
Բայց ձեզ յերգեր իմ, յերբեք չ'մ գիջի:

Ծաղկեք, աճեցեք իմ սրտի այգում,  
Թախծեք, ծիծաղեք ինձ հետ միասին,  
Յեղեք հարազատ, անբաժան ինձ քույր,  
Յերգեր անբաժան, խոր ու լիասիրտ:

Հ Ո Ւ Ս Ա Դ Ր Ո Ւ Մ


Թող վհատութիւնդ ու կասկածի փշերը,  
Ու աստղալից ու ջինջ այս գիշերը,  
Յերգիդ վրա տոկան, անափ սիրով,  
Վոր շողշողուն կապույտ մի առավոտ,  
Դառնաս դու փառավոր,  
Պոեմաների, յերգի զլիմ Վարաշիւով...

THE HISTORY OF

THE CITY OF BOSTON  
FROM THE FIRST SETTLEMENT  
TO THE PRESENT TIME  
BY  
NATHAN OSGOOD  
VOL. I.

3

**ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ**



Ն Ա Վ Թ Ը

Յես շրջում եմ ահա  
Սև ցիլկոպների քաղաքում,  
Վորոնց մենք ենք բարձրացրել հողին,  
Վորոնց համար,  
Կառուցել ենք քաղաքը այս ազմկուն,  
Արահետներ ենք հարթել,  
Մինչև վերջին հանքը,  
Տվել ենք վորոնց  
Մեր վոսկորներն անգամ  
Ու աչքերի կրակը . . .

Հիմա, յերբ անկողիններում իրենց սև  
Հսկաները քնել են,  
Յուրաքանչյուրի դուռն են բախում  
Իմ բուռնցքները,  
Արթնացնում են,  
Ուզում եմ լսվեն,  
Այդ յուզոտված, վոսկրե հսկաների  
Չայները վսեմ . . .

Յուրաքանչյուրի դռան մոտ,  
Չայնով մի խոնավ,  
Ասում եմ յես ահա խեղդվելով փոշուց.

—Լսիր նավթ,  
Լսիր ինձ,  
Լսիր ձայնը իմ յերգի,  
Դու վոր վեր ես խուժում,  
Հողի յոթերորդ բնգերքից...

Դու վոր գիտես, վոր մենք  
Քրտինքներում կորած  
Աղյուսե հարկեր ենք  
Բարձրացնում շենքերին,  
Կամուրջներ ենք գցում,  
Ու ուզում ենք վոր քո  
Թարմ արյունը ծորա,  
Ու մեքենաներից  
Դատան ժանգը քերի...

Մենք ուզում ենք վոր քո  
Թարմ ու սև արյունը  
Լույս տն լապտերին  
Կախված խավարներում,  
Ինչպես ծաղիկները,  
Յերբ բացվում ե գարունը  
Ծաղկավորի՛, փթթի՛,  
Սիրիբական գյուղերի  
Բուքում կորած հեռուն...

Մենք ուզում ենք, վոր սև  
Արյունը բալոններիդ,

Հարյուր վաթսուհի միլիոնների  
Յերակներով հոսի,  
Հարյուր վաթսուհի միլիոնների  
Յերկրում խոսի,  
Չնվազի յերբեք,  
Չսպառվի յերբեք,  
Ու կարկաչի հավետ ու հմայի  
Ինչպես այն հիասքանչ ջուրը հեքյաթային:

Մենք ուզում ենք աշխարհի  
Յերաժշտությունը լսել,  
Վիշկաններից թռչող  
Ֆանտաններում քո սև...  
Ու սիրում ենք մենք քեզ  
Դեղնագույն փրփրում,  
Մեղ համար դարնան պես,  
Գարնան պես ես բուրում...

Ուզում ենք քեզ շոյել  
Մեր ծնկներին,  
Ինչպես սև վարսերը  
Թրքուհիների...

Մենք ուզում ենք... Մակայն,  
Յեթև սահմանների հորիզոնի վրա,  
Թշնամի եսկադրոնների  
Ուրվականները գծվեն նորից ելի...

Յեթե լայն ծովերի կանաչ ջինջ ջրերին,  
Ուր լողում են դեղին, նարինջ ձկները,—  
Ընկնեն սավերները նավերի,  
Անփութորեն սողան  
Մազութե գուզները  
Զրհակիրճների...

Բրիտանական դաժան սավառնակները յեթե  
(վորոնց շաշող թևերին իրենց դրոշն և փորած)—  
Նորից փորձեն մեր ջինջ, լուրթ յերկինքը թերթել—  
Փռել մահ ու ավեր ու կործանման կրակ...

Յեթե յերկիրը խուժե  
Վորպես վարակ դազիր,  
Սպիտակ ամպը, մուժը,  
Թունոտ գազի...

Բրիտանական լորդը յեթե մեր դեմ հանի,  
Վորպես Պիեր մի խելագար,  
Խաչակիրներ մոլի,  
Կոմունիստներին կախազանի  
Խաչափայտին դամե,  
Ու արյունը քամե  
Նրանց նորից նորից...

Ասա նավթ,  
Պատասխանիր դու ինձ  
Վոր ժայթքում ես անա հողի խոնավ խորշից  
Վոր հուրհուրում ես մեր հուր-հուր կրակները,

Պատրաստ եմ դու նետել,  
Բո զայրույթն ու փոշին,  
Պատրաստ եմ սլաշտպանել յերկրի սահմանները...

Հանկարծ ալիք-ալիք,  
Իրանն որորելով անկողնում իր խոնավ,  
Հողի կապույտ մուժից,  
Պատասխանեց նավթը.  
—Ման հողիրամ բալի...  
Իսկ դե նավթի լեզուն՝ լեզուն և ուժի...

ԱՆԳԼԻՔԱԿԱՆ ՄԱՏՐՈՍԻ ՅԵՐԳԸ

Լողում, լողում եմ մշուշում,  
Պտույտում գիշերների,  
Բրիտանիան, Բրիտանիան,  
Թագուհի դու ծովերի:  
Աշխարհի վողջ ավերում  
Բրիտանյան ջրերը—  
Ջրբալտարում կանգնել են  
Անգլիական նավերը:  
Ու ծովերի գորշ մուժով  
Ռազմանավերն անթիվ,  
Ահա նայում են խոժոռ  
Դեպի ավերը հնդիկ:  
Թողել ես Աֆրիկայում  
Հետքերը խաբիսխներիդ  
Բրիտանիան Բրիտանիան,  
Թագուհի դու ծովերի:  
Զգուշացիր սակայն դու,  
Կարիքն և ծովերում լողում,—  
Զինական ջինջ ջրերը  
Փոթորկում են ու դողում:

Ի՞նչ ես անելու դու  
 Ո, հայրենիք իմ խաղաղ,  
 Յամաքում նավերդ  
 Ձեն կարող լողալ:  
 Փակե՛ր, աչքերդ լույսից  
 Ձինական լույսերի,  
 Բրիտանիան, Բրիտանիան,  
 Տիրուհի դու ծովերի:  
 Ուր ծովահենն ե լողացել—  
 Լողում եմ ուշ գիշերում,  
 Լիալուսինն ե մարել  
 Հայրենական իմ յերկրում:  
 Ա՛խ, մայր իմ, քո բանը վատ ե  
 Ջրերն են քո մրրկում,  
 Ափում փակված պանդոկը  
 Թախծում ե ու մորմոքում:  
 Դու շղթաներն ես թողնում  
 Վերջին խարխուլներիդ,  
 Բրիտանիան, Բրիտանիան,  
 Թաղուհի դու ծովերի:  
 Ասան ս, սեր իմ անգին,  
 Ասեք, դուք ընկերներս,  
 Յերբ են սնել մեզ կարգին  
 Բրիտանյան ջրերը:  
 Մենք լողացել ենք ծովերում  
 Կապված գորշ կայմերին,

Մեզ Անգլիան խորթ մոր պես  
Քշեկ և մեր տներից:  
Արևի տակ չորացի՛ր,  
Փայլերի տակ շողերի,  
Ո՛ր, վերջին, վերջին լճակ  
Բրիտանյան ջրերի:

Մ Ա Ր Գ Ա Ր Ի Տ Ը

Փառաբանում եմ յես այն յերկիրը,  
 Ուր Լոկ-Բատանը, Կալան և շնչում,  
 Ուր կարկաչում են իմ նոր յերգերը,  
 Ու նվագները քաղցրահնչյուն:  
 Փառաբանում եմ քեզ կանաչ Սեվան  
 Բեզ պուրակներում կորած իմ Բաթնում,  
 Ուր որորել և Սայաթ-Նովան  
 Իր ժողովրդի յերգերը արտում:  
 Փառաբանում եմ յես այն յերկիրը,  
 Ուր տուրքիններով Բուռ գեան և հոսում,  
 Ուր շեկ Զագեան և փռել լույսերը  
 Լեռների դոտով յե՛վ մութ յե՛վ լազուր:  
 Փառաբանում եմ յես այն յերկիրը,  
 Ուր ծաղիկները գորգեր են փռել,  
 Ուր մեր բամբակն և հորդել, փրփրել,  
 Ինչպես Թերեկի ճերմակ ջրերը:  
 Ուր վոր խաղողն և, լիմոնն և համնում,  
 Ուր նարինջներով ափը սուղվում և,  
 Ուր վարդեր կան վառ, լճակներ լազուր,  
 Ուր թեյն և բուրում արտերումը:  
 Փառաբանում եմ յես այն յերկիրը,

Ուր ձորերն են խոր, հանքերը խորունկ,  
 Ուր զընգում են մեր քլունզները  
 Ու մեր վաստակի քրտինքն է ծորում:  
 Ուր մտերիմ են ազգությունները . . .  
 Ու բազմաշնդ են, ու բազմազան են,  
 Քան գարնանային ծաղիկները,  
 Քան լուսաբացի ծիածանը:  
 Փառաբանում եմ յերկիրն այն վորտեղ,  
 Մեր յեղբայրական սերը խշշում է,—  
 Ուր թանգարան ենք մենք արդին նետել  
 Կոտորածների արնոտ դաշույնը:  
 Փառաբանում եմ յերկիրն այն ուրախ  
 Ուր անարգվել են մուլան, քսակն իր,  
 Ուր մեր սիրելի Նեյմաթուլան  
 Ու Վզովինն են փառքով պսակվել:  
 Ուր վոր ննջում է Ծահումյանը,  
 Ծաղիկների մեջ վառ ու կարմիր,  
 Վորտեղ հնչել է նրա ջինջ ձայնը, —  
 Մեր կավին տվել յնձ սիրտ, յնձ մարմին:  
 Ուր վոր Լենինի նամակներն են,  
 Մի անջինջ փայլով մի որ շողացել,  
 Ուր Ստալինը—պայծառատես  
 Մեր նավավարն է աճել մեծացել:  
 Ծաղկի՛ր Հաբավի արեվի ներքո  
 Յերկի՛ր բերքերի՛, յերգի՛, խնդության  
 Անդրֆեդերացիո՛ւ, դու մարգարիտն ես  
 Լենինյան մեր մեծ, մեր վեհ Միության:

Կ Ա Ր Մ Ի Ր Բ Ա Ն Ա Կ Ա Յ Ի Ն Ի Պ Ա Տ Մ Վ Ա Մ Ք

Ձմռան գիշերը,

Յես ել հուշերս

Բարեկամներիս սիրում եմ պատմել,

Ձյունոտ Միրիբում, ձյուն հեռուները,

Իմ պառավ մայրն ել ինձ սպասում եր...

Գնում եր մինչեւ շեմը անտառի,

(այդ դիտեմ մենակ յես իմ հուշերով)

Նայելու ճերմակ ձյուն ճանապարհին—

Ձի գալիս արդյո՞ք վորդին դեզերող:

Բայց ուրիշ տեղ եյին իմ մաքերը,

Իմ ճանապարհը տայգան եր կիսել:

Յեկել հն մի որ պարտիզանները

Ու մորս ասել,

Կախված եմ յես ել:

Թեյ ե նա դրել, տխուր ու խոնարհ,

(թեյելն այդ որը այնքան դժվար եր),

Հետո աչքերը արցունքոտ, խոնավ,

Կապել ե գլխին տատիս սեւ շալը...

Իսկ լուսարացին, յերբ գլուղը քնած էր  
Ու արեվը դեռ մուժը չէր կիսել,—  
Ոֆիցերական խրճնոցն և գնացել,  
Սոտի դեզերը վառել, հրկիզել . .

Ժամում մեղքերը նրան չեն քավել,  
Տերտերն ասել և.

—Նա ել չի տեսնի դրախտի դուռը:  
Ոֆիցերական շտաբում կապել,  
Ու հրացանով ձեծել են մորս:

Ահա խաղաղվեն որերը կովի,  
Ու վերջացնեմ ծառայությունս, —  
Կգնամ Սիրիբր, մեր գյուղական ելի,  
Ու ինչ ել լինի կտեսնեմ մորս . .

Խ Ա Վ Ա Ր Ե Ո Ր Ս

I

Խափար ե որս գիշերվա պես,  
Խափար ե արեփս,  
Ինչպես գրկեմ սիրելիս քեզ,  
Միրտ չկա այլևս:  
Ո՞ւր ե գութանս, ձիս թւր ե,  
Ո՞ւր տունս ու հողս,—  
Իմ կյանքը թույն ե, մրուր ե,  
Իմ որը անշող ե:

Ա՛խ կյանքս անշող ե, մի որս անկրակ  
Յես մի անտուն բատրակ եմ  
Աշխարհի վրա:

II

Այգը բացվեց վարդի պես,  
Յելավ արեփը,—  
Յես փարվում եմ սեր իմ քեզ,  
Գիշեր չկա այլևս...

Ահա՛ գութանս, ահա ձիս,  
Ահա հողս ու տունս,—  
Յես կարմիր գրողով բարձրացա,  
Հարստի դեմ վնաս ե ատելությունս—  
Ձեռքերիս սեղմում եմ հրացանս...

Ձ Ի Ն Վ Ո Ր Ի Յ Ե Ր Գ Ը

Հայրենիքիս վրա  
Գարնանային աստղերը,  
Ճոճվում են ելի,  
Աղմկում են զհոտերը վարար,  
Աղջիկ իմ սիրելի...

Նորոգում են ազոավները,  
Իրենց սեվ բները,  
Ու ապրում ենք մենք ելի,  
Աղջիկ իմ սիրելի...

Ապրում ենք իմ անուշ,  
Ու ջահել ենք դեռ ելի,  
Ինձ զինվոր են տանում,  
Աղջիկ իմ սիրելի:

Չմհոնես յեթե  
Դու ցրտից,—սովից,—  
Կտեսնվենք դեռ ելի,  
Աղջիկ իմ սիրելի...

Ինձ կռիւլ են քշում դեպի  
Կարմիր սահմաները.  
Տեսնենք ուր կերթան,  
Ես սեւ գործերը...

Մեր սվինները,  
Ընդդէմ խորհուրդների,—  
Չենք հանի յերբեք,  
Աղջիկ իմ սիրելի...

Ու չխփեց, թե ինձ  
Նենդ զնդապետը,—  
Կհանդիպենք դեռ ելի,  
Աղջիկ իմ սիրելի...

Մ Ե Ր Կ Վ Ի Լ Ա Ձ Ն Ք Ո Ւ Յ Ր Ե Ր Ը

Ն. Միծիւկիւուհի

I

Ծագից բոցավառ

Լուսինը վերից,

Արծաթե ավազ

Թափեց լեռներին:

Ջընազ հարսի պես որոր ու շորոր  
Անցնում է ահա Գուռը գետը ձորով:

Քամին է ահա ծառերին քսվում

Ու ալիքների յերգերը լսում:

Ու փողոցն ահա ամայի վայրի . . .

Յերանի տվի յես այն որերին,

Յերբ մայրս սոսու շվաքում նստած

Կապույտ աչքերի լճերը. հստակ

Թելին, ասեղին, կտորին դամած,

Կարում եր շալվար, շորեր ինձ համար:

Յերբ համբուրելով աչքերս լազուր,

Ինձ տաք անկողնում որոր եր ասում:

Ու սիրում եյի լեռների շղթան  
 Մեր ձյունոտ, կապույտ կովկաս աշխարհի,  
 Ու արահետը, ու ծուխը մեր տան,  
 Հետո բուրմունքը ակացի ծառի:  
 Ու յես իմ սրտում պահում եյի հար  
 Յերազիս տեսած խարույկը պայծառ:  
 Յեկ թվում եր ինձ լուսնկան լուսե,  
 Ամպերում ընկած արծաթե ափսե.  
 Իսկ ձյունադազաթ  
 Լեռները հեռվից  
 Նմանվում եյին յափնջի հազած  
 Մերկվիլաձեյի չքնաղ քույրերին:  
 Մանկություն իմ, յեկար, անցար  
 Զրերի պես խշուռն Գուռի.  
 Ու ծիծաղդ արծաթաձայն  
 Շաղ տվեցիր մեր սարերին:  
 Հագնում եյի չթե բլուզ,  
 Գլխիս դնում սև մի փափախ,  
 Գնում դաշտերը խաղալու,  
 Մեջքիս կարմիր գոտի կապած:  
 Թխում եր մայրս ճաղի՝  
 Շաքարից ել քաղցր անուշ,  
 Ու գալիս եր հայրս արտից,  
 Ու իրիկվան ճաշը անում:  
 Ունեյի յես աչքեր խնդուն,  
 Հետո մազեր, վոնցվոր գիշեր.  
 Միրում եյի լողալ գետում

Ու ձի նստել դաշտով քշել:  
Ամռան՝ արտը հաց տանելիս  
Խփում էյի թռչուններին,  
Կամ ըները ցրիվ տալիս,  
Հանում նխշուն ճտիկներին:  
Տանում էյի սարը դեմի  
Մեր գառները՝ ամպեր ճերմակ,  
Համբուրում եր դեմքս քամին  
Ու պար գալիս դաշտի վրա:  
Կարդում էյի (տանը թե հանդում)  
Մեր Արսենի պատմությունը,  
Ու լցվում եր սիրտս խանդով,  
Ու պղտորում հոգուս հունը:  
Տենչում էյի բեղեր սև-սև  
Ու կապուտակ սուր մի խանչալ,  
Դուշմանի դեմ պարզել սուր, զենք,  
Փրկել ինչքան մարդ կա անճար:  
Մանկություն իմ, յեկար, անցար  
Ջրերի պես խշշուն Գուռի,  
Ու ծիծաղդ արծաթաձայն  
Հսեց արտը, հանդը, ուռին...  
Մաշված գորգը փռել տակը  
Նանն է նստել մի հին թախտի.  
Հին ուռենու սեվ շվաքը  
Նման եր մի հսկա ուղտի:  
Կտրվում եր ասեռ շունչս

Խորովածի Գուռի ձկան,  
 Անվ ճտերը արած շուրջը  
 Կտկտում եր մի թխսկան:  
 Շունն եր նստել մի քիչ հեռվում  
 (նանի նման ծալապատիկ),  
 Ու նայում եր դեպի հեռուն,  
 Ու արեֆն եր դիպել պատին:  
 Մայրը յեկել եր տան կտուրը, —  
 Աչքը դցել ճանապարհին,  
 Սպասում եր, թե յերբ հյուրը  
 Կմոտենա մոտիկ ծառին:  
 Հյուր ե յեկել զույգ քույրերին,  
 Զույգ քույրերին հյուր եր յեկել  
 (մարդը մարդուն հյուր ե, եյի,  
 կգա, նորից կերթա մեկել):  
 Ախ, քույրերն եզ զույգ ազավնի,  
 Հայացքներով ջինջ ու հստակ,  
 Ով վոր նայի սիրի, հաֆնի,  
 Սիրտը հալվի տեղը նստած:  
 Ուզում եյի գրկել նրանց  
 Ու թշերից մի կուշտ պաչել,  
 Բայց նայում եր մայրը վրաս  
 Ու հանգցնում կրքերս ջերմ:  
 Սիրում եյի սիրով անքուն  
 Բոյը նրանց ձիգ չինարի,  
 Նրանց են միշտ յերգել կյանքում

Յերգիչներն իրենց քնարին:  
Շատերը նրանց սիրուց մխում,  
Դառնում եյին մեր լեռների  
Յերկնքի պէս թախծոտ, ախուր  
Ու նրանց պէս ամպոտ ելի:  
Հարբում եյին ու դառանցում  
Արնաթաթախ ինչվոր խանչալ  
Յեվ ուղեղն եր նրանց խանձում  
Չար մաքերի հոսանքը չար:  
Իսկ վոմանք ել բարձր բռնած  
Իմ բոյաչափ մի գիտարտ,  
Յերգում եյին վարդեր քնած  
Ու աստղերին մտնում ծառա:

## II

Քշխշում եյին արտերը հասուն  
Սարալանջերին, դաշտերի գոշին,  
Արտերի միջում քրտինքն եր հոսում  
Ու նարնջագույն արեվի փոշին:  
Գրտինքն եր քամվում աղեխարշ, աղի,  
Վորբերի թափած արցունքի նման,  
Արտերի վրա յերգն եր մանգաղի  
Ու շողշողացող փայլերը նրա:  
Գրտինքն եր թափվում արտում ու ձորում  
Մարգում ու հովտում, գյուղերի ճամբին,  
Գրտինքի նման արևն եր ծորում.  
Արտում տնքում եր մի գեղջուկ ապի:

Քրտինքն եր ծորում. . . յերբ մայրն եր մենակ  
Վորբերի համար հունձք ու կալ անում,  
Են ել մի թավադ անկուշտ, անխնա  
Գալիս սրբում եր, իր տունը տանում:  
Քանզում եր բոլոր դեղերը խոտի  
Ու բերնեքերան լցնում սելերը  
Ու քշում իրա այվանը մոտիկ,  
Կտրում թշվառի սրտի թելերը:  
Հայացքը դաժան, բեղերը դեղին՝  
Վոնց վոր յերկու թուր, յերկու կեռ դաշույն,  
Սոսնս կքշի բանալ մետախ  
Ու սիրիրական հանքերը մաշող:  
Բայց ելի, ելի վորդիկը հողի,  
Լցված վրեժի, սոսքարի թույնով  
Բարձրանում եյին ընդդեմ վոստիսի  
Իրենց ամեն մի կաթիլ արյունով:

Ու փախչում եյին անտառները մութ,  
Հագած սուր սրեր, դենքեր, յափնջի,  
Գնդակի բռնում դաժան թշնամուն  
Արտերում, դաշտում, լեռների լանջին:  
Լեռները կապույտ, կիրճերը խորունկ  
Նրանց սիրելի տունն եր հարազատ,  
Այնտեղ չեր տիրում թավադի բուռնցք  
Ու չեր շառաչում վոչ մի խարազան:

Մի ամառային կապույտ իրիկուն  
 Մերկվիլաձեյի քույրերը յերկու  
 Չսպասելով ել արևի շողին,  
 Իրենց խրճիթը ու մորը թողին,—  
 Անտառը փախան հրացան առած  
 Ու կարմիր-կարմիր պարտիզան դառան,  
 Պարտիզան դառան քույրերը յերկու,  
 Վորբերը յերկու պարտիզան դառան,  
 Լեռների վրա քամին եր յերգում,  
 Չորերի միջում Քուռ գետը վարար:  
 Չորերը մտան, քերձերը մտան  
 Ու իրենց կորած յեղբորը գտան,  
 Հագած եր մի սեւ, մի տաք յափնջի,  
 Հագած եր սրեր, զենքեր շողշողուն,  
 Ու յերբ վոր տեսավ իր զույգ քույրերին,  
 Ուրախությունից սիրտն եր գողգողում,  
 Ինչպես թփերը կպած ժայռերին:  
 Պատմեցին նրանք թավաղի մասին,  
 Վոր յեկավ սրբեց ու հունձը տարավ:  
 Յեւ այն, վոր ծեծեց, քաշքշեց մազից  
 Իրենց սիրելի, իրենց մոր պառավ:  
 Պատմեցին հետո, վոր յերեկ գիշեր  
 Ծառից կախեցին յերեք զինվորի  
 Ու քանիսին ել Սիրիւր են քշել  
 Ու քանիսիւզ ել կքշեն նորից:

Իրենք ել մտան քար ու քարանձավ  
Ու խոր այրերը ժայռերի տակին,  
Եդ որից վոչ մի թավադ չպրծավ  
Յերկու քույրերի տաք-տաք դնդակից:

#### IV

Բուքն եր պարում ու որորվում...  
Խնձորի պես աստղերն ահա  
Յեվ ցուցուում, և ցրտահար,  
Վայր են թափվում, կորչում ձորում:  
Բուքն եր պարում ու ձյունների  
Դեղերն ահա գետը քշում,  
Ո՞վ և դրսում լալիս ելի,  
Ո՞վ և կորած վորդուն հիշում:  
Բուքն եր պարում ու մշուշում  
Ջյունը լցնում հյուղ ու կածան,  
Կաղականձում և հեռվում մի շուն  
Սրտակտուր ու վողբաձայն:  
Ու խավարում թվում և թե  
Ամեն մի թուփ՝ մի թշնամի,  
Ու թշնամու դնդակը թեժ  
Փնտռում և ուժեր կարմիր:  
Մեկը պիտի արցունք թափի,  
Արյուն պիտի թափի մեկը,  
Դարանիլ են, նստել ավին,  
Յեվ թշնամին, և գորշ մեզը:  
Սեվ թշնամին գյուղն և խուժել,

Գյուղն և խուժել նենդ թշնամին,  
 Հոհուում եր ամբողջ գիշեր,  
 Թեւիլը արնոտ մի խենթ քամի:  
 Հեովում կապույտ բլրի ծիրին  
 Մի փոքրիկ տուն ծխում մխաց,  
 Հրացանը սեղմած ձեռին  
 Ափին հանգավ մի թուխ աղս:  
 Վորտում են հրացաններ,  
 Գնդակներն են անկ թռչում,  
 Մի արնոտ ձեռք հուր և ցանկ  
 Ու վառող և գյուղը շնչում:  
 Ու վառվում են դեղեր խոտի,  
 Յեւ անթափանց սեւ խավարում  
 Գնդակն անցավ մեկի վտից  
 Թռավ, մնաց մեկի փորում:  
 Ուժն եր գործում նենդ թավադի,  
 Վերջին անգամ ուժը նրա.  
 Ու վորպես սեւ մի դավադիր  
 Մուլթն և չոքել գյուղի վրա:  
 Սակայն ելի կտուրներից  
 Ռազմիկների ուժը վերջին,  
 Ու չի ուզում դերքն իր գիշի:  
 Կրակում են թեկավորված,  
 Կրակում են խրճիթներից՝  
 Հանուն ազատ ու լավ որվա,  
 Հանուն կարմիր խորհուրդների:

Կրակում են . . . ու եղ ժամին  
Խրճիթի մեջ ուբախ յերգով  
Դրոշներ են կարում կարմիր  
Մերկվիլաճե քույրերն յերկու:  
Բայց թշնամու որդան հանկարծ  
Այդ ապստամբ հյուղն ել խուժեց,  
Ու ճրագը ահա հանդավ  
Ու ծանրացավ մութ մի դիշեր . . .  
Չորում Բուռն ե լալիս տխուր  
Յերկու դիակ ալիքներին,  
Ու կազբեկն ե հեռվում մխում  
Ու լեռների շարքը ելի:

\* \* \*

Ել նրանք չկան իմ լավ ընկերներ,  
Ել նրանք չկան աստղերի ներքո,  
Բայց յես դիրքերում կուզեյի մեռնել,  
Ինչպես այն հերոս քույրերը յերկու:

Լ Ե Ն Ի Ն Գ Ր Ա Դ

(Մի հասված հեղինակի նույնանուն պոեմից)

Նեվա, Նեվա՛, ո լուրթ  
Գետ իմ կապուտաչյա,  
Դու լսել ես մի որ հսկա «Ավրորայի»  
Հրետանու յերգը ու վորոտը անհղ՝  
Ընդդեմ յունկերներին, քո ափերին կառչած,  
Ընդդեմ արքաներին՝ սովի արյան, մահի,  
Ընդդեմ նրանց, վորոնք Ռուսաստանը շիկահեր  
Դարեր, դարեր, դարեր, բանտի մեջ են պահել . . .  
Նեվա, Նեվա՛ ո՛ր, լուրթ  
Գետ իմ կապուտաչյա,  
Ալիքները քո ջինջ,  
Վողջունել են մի որ  
Իլիչի,  
Բոցեղեն ու անմար անհեղ մարտակոչին . . .  
Հոկտեմբերի գիշերը,  
Սպասել ես դու յել քո կապուտակ բացից,  
Հոկտեմբերյան պայծառ կարմիր լուսաբացին . . .

Հրաժեշ ես ասել—  
 Զմեռույին պալատին մարմարյա ու բյուրեղ,  
 Ունկնդրել ես սիրով պատմության կանչին,  
 Յերբ զնդակներն են մեր վրեժով մի անջինջ,  
 Նեվյան պրոսպեկտի տանիքները համբուրել...  
 Նեվա, Նեվա, Նեվա,  
 Գետ իմ կապուտաչյա  
 Մրրկաշունչ, ահեղ մեծ որերի վկա,  
 Պատմիր դու ինձ, պատմիր աչքերով ջինջ լճյա,  
 Այն անանուն, անհայտ մարտիկների մառին,  
 Վոր ավերիդ ընկան՝  
 Հայացքներում պահած ցուքը մեծ յերազիւ  
 Յես յեկել եմ ահա նավթի յերկրից հեռու  
 Յեղբայրական անդին շիրիմները նրանց  
 Գրկելու ու սիրով գուրգուրելու...  
 Յեկել եմ համբուրելու,  
 Այն առաջին անջինջ, խոր հետքերը  
 Գնդակների նրանց,  
 Վոր նետել են մի որ այս մշուշոտ հեռվում:  
 Յես յեկել եմ ահա գովերգելու նրանց  
 Բաղխումներն անմար, արդեն անդարձ անցած...  
 Նեվա՛, Նեվա՛, Նեվա՛, ալիքներդ շռայլ  
 Ա՛խ, տեսել են ինչքան մահ, կախաղան, հանցանք...  
 Ա՛խ, ինչքան են քշել քաղցած ու սովահար  
 Մուժիկներին ավերը Հյուսիսային ծովի...  
 Գնրմանական պոռնկուհին նստած գահի վրա  
 Գլխատել է քանի ըմբոստ Պուգաչովի:

Ժանդարմ Նիկողայն և պոետին այն սիրելի  
 Գանտեսի հետ հանել արնոտ մի դուռելի...  
 (Պուշկին, Պուշկին, ինչո՞ւ, ինչո՞ւ դու չմեռար  
 Սենատի թնց արնոտ հրապարակի վրա)...  
 Նեվա, մեր թշնամուն մենք յերբեք չենք ների,  
 Ինչպես վոր չենք ներել...  
 Ինչքան, ինչքան, ինչքան դու զոհեր ևս տեսել  
 Այն ամենի բերդից ինչքան մեռելներ ևն  
 Մերկ, անշապիկ բերել նետել ջրերդ սև...  
 Այստեղ, ահա այստեղ կախազանի փայտից  
 Խիզախ Ռեյկիվի սեղ հասակն ևն ճոճել,  
 Խեղել ջրերում քո բանտարկյալներ անթիվ,  
 Կյանքը վորոնց կռվի, պայքարի յեր կոչել...  
 Ու աչքերն ևն վառվել վերջին ատելությամբ  
 Աննկուն ու ըմբոստ կարակողովի,  
 Հետո մահն և կախվել վորպես ծանր մի ամպ...  
 Նեվա, Նեվա, Նեվա,  
 Գետ իմ կապուտաչյա,  
 Թող քո դաժան ու ժանտ անցյալդ նզովվի...  
 Յես յեկել եմ ահա վոխով անմար ու չար  
 Հյուսեմ իմ յերգերը կռվի ու նզովքի...  
 Նրանց ցամաձբ լիքը յես յեկել եմ ահա,  
 Յերգեմ հին Ռուսիայի դաժանությունն անսիրտ,  
 Քանդեմ մեկ-մեկ, պոկեմ, խելագար Պետրոսի  
 Մազերը...  
 Ու վրեժը թափեմ իմ կրծքի տակ պահած:

Նեվն, Նեվն, Նեվն,  
Գեթ իմ կապուտաչյա,  
Ալիքներդ ծավի թող իմ դեմք խաղան,  
Սիրում եմ յես նրանց որերը խաղաղ,  
Յեվ քեզ, անպարտելի լենինյան իմ քաղաք,  
Հոկտեմբերի որբան արթուն լենինգրադ,  
Քեզ իմ կյանքը, կամքը, յերգերս չգրած  
Քաղնք իմ հարազատ, քաղնք իմ անգրավ:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Յերգ գրած գիշերը յերբ պոետը կարդում  
 էր յերգերի գիրքը . . . . .

62

I

2. Ել չեմ քաշի հյուսերդ . . . . .	9
3. Յերգ գրած սիրենի տերեզի վրա . . . . .	10
4. Տրիտեաներ Ելիդին . . . . .	11
5. Յես սիրեցի աղջիկս . . . . .	14
6. Մութն է իջել կապույտ . . . . .	16
7. Աղջիկները . . . . .	18
8. Նամակ . . . . .	21
9. Ա՛խ, յես քեզ եմ դեռ հիշում . . . . .	24
10. Կարոտ . . . . .	25

II

11. Յերգ վարնան մասին գրված ձմեռը . . . . .	31
12. Իմ սմայ, իմ ջինջ անձրեկ . . . . .	33
13. Գարնանայնիս ռապորտ զեկավարին . . . . .	34
14. Լիրիկական . . . . .	35
15. Յերեք յերգ աշնան . . . . .	38
16. Ծովի յերգը . . . . .	41
17. Հուշարձան . . . . .	44
18. Վիշկաների քաղաքում . . . . .	46
19. Վողջույն քեզ . . . . .	47

20.	Խորհրդային Ազրբեջանին . . . . .	48
21.	Լենինյան վեճ դրոշի ներքո... . . . .	49
22.	Յերեվանի նման... . . . .	50
23.	Յերազուժ եյինք... . . . .	52
24.	Յես սիրում եմ զիշերը... . . . .	53
25.	* * *	54
26.	Յերգ Արկտիկայի Հերոսներին . . . . .	56
27.	Յերգ Չահլուխյան . . . . .	58
28.	Հուշ . . . . .	60
29.	Հրամեշտ . . . . .	62

III

30.	Մենք և Թումանյանը . . . . .	67
31.	Յերգերիդ յհրկնքի տակ... . . . .	71
32.	Շողշողում են մեր հյուսերը... . . . .	72
33.	Ավետիք Իսահակյանին . . . . .	73
34.	Մաքսիմ Գորկուն . . . . .	76
35.	Բառյակներ Գերգովսուն . . . . .	79
36.	Հայնրիխ Հայնեյին . . . . .	82
37.	Գուրգեն Մահարուն . . . . .	84

IV

38.	Պոետի, նրա սիրո և մի խմբագրի պատվերի մասին . . . . .	87
39.	Բալլադ մի թրքուհու, նրա, սիրած տղի գարնան շրերի և չինարիների մասին . . . . .	92
40.	Ելեգիա . . . . .	96
41.	Յերկու մանկություն . . . . .	100
42.	Քրոջ պատմվածքը . . . . .	108


V

43.	Յեկեղ են պոետներ ու անցել... . . . .	116
44.	Կոմունիստական յերկիր... . . . .	117

45. Քանդակ . . . . .	118
46. Հիմա ավելի հեշտ և յերկիր իմ . . . . .	119
47. Յերգ յերգի մասին . . . . .	120
48. Յերգերիս . . . . .	121
49. Հուսադրում . . . . .	123

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

50. Նազիմ Հեքմեթ—Նավթը . . . . .	127
51. Մ. Սվետլով—Անգլիական մասրոսի յերգը . . . . .	132
52. Գ Սարգուհնով—Մարգարիտը . . . . .	135
53. Իհսիֆ Ուսկին—Կարմիր բանակային պատմըվածքը . . . . .	137
54. Անատոլ Հիդաշ—Պավար և որս . . . . .	139
55. Վ. Լուզավսկոյ—Զինվորի յերգը . . . . .	140
56. Ռափին Գվիտաձե—Մերկվիլաձե քույրերը . . . . .	141
57. Մ. Ռաֆիլի—Լենինգրադ . . . . .	152



---

Baş mətbuat müdirligi müvəkkilliyi № 8685 Sifariş № 1144  
Tiraj 3000. İstehsa ata verilmiş 10/XI - 34. Capa verilmiş 10/XII

- 34. Cap listi 6<sup>1/2</sup><sub>32</sub>. Kağız formatı 62X94.

Azərbaycan mətbəəsində basıldı. 26-lar adına „Kitab sarayı“  
Bakı, Əli Bəyramov küçəsi.



1934 ?  
P. 100

ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0043934

(324)

1  
I  
7966

Գինը 3 բուլբու  
Կարգվել 05 կ.



ՕՐԱՏԻ

„M U D Q“

(Տարեր)

